

— Նախ քան այդ մտքի հետ ընտելանալս, պատասխանեցի ես, — ինձ հարկաւոր է աւելի մօտիկից ճանաչել այն Բոստոնը, ուր ես ընկել եմ պատշաճմամբ։ Տանիքի վրա եղած ժամանակ դուք ինձ ասացիք, որ թէս մի հարիւր տարի է անցել ձեր ժամանակից մինչև այսօր, բայց այնքան փոփոխութիւններ են եղած, որ չեն պատահած նախկին հազարաւոր տարիներում։ Ձեր ասածն ապացուցանում էր հէնց քաղաքն ինքը, որ ընկած էր աչքիս առջևը։ Սակայն շատ ցանկալի է իմանալ, թէ յատկապէս որպիսի փոփոխութիւններն են գլխաւորները։ Հէնց սկսենք նրանից, թէ դուք ինչպէս վճռեցիք արդեօք բանւորական հարցը։ 19-րդ դարում այդ խնդիրը դառել էր առասպելական սփինքսի հանելուկը, և վերջին ժամանակներում, սփինքսն սպառնում էր կուլ տալ հասարակութեանը, որովհետև իր հանելուկի պատասխանը չէր ստանում։ Եթէ դուք լուծել էք այդ հանելուկը, ապա արժէր, որ հարիւր տարի քնանայի ես, այդ լուծումը տկանջովս լսելու համար։

— Որովհետև մեր օրերում բանւորական հարց չկայ այլևս, պատասխանեց բժիշկը, — և յի էլ կարող ծագել այդպիսի հարց, ես ենթադրում եմ ուրեմն, որ մենք վերջնականապէս լուծել ենք այդ հանելուկը և ոչ մի սփինքսից երկիւղ չունինք այլևս։ Ձեր հասարակութիւնն արժանի էր սփինքսի կուլ զնալուն, քանի որ անկարող էր մի այդքան պարզ հանելուկ լուծելու։ Հանելուկի լուծումը արդիւնարերութեան զարգացման ընական հետևանքն էր։ Հասարակութիւննը մնում էր միայն ընդունել այդ զարգացման օրէնքը։

— Կարող եմ ձեզ հաւատացնել, որ այն ժամանակ, երբ ես քննեցի ու այլս վեր չկացայ, հասարակութիւնը չէր ընդունում բանւորների շարժման օրինաւորութիւնը։

— Կարծեմ դուք քնել էնք 1887 թւականին։

— Ուղիղ 1887 թւականի մայիսի 3-ին։

— Խօսակիցս մտախոհ կերպով սկսեց երեսիս նայել։

— Եւ դուք պնդում էք, ասաց նա վերջապէս, որ նոյն իսկ այդ ժամանակ գեռ չդիտէին, թէ որպիսի վախճանի է մօտենում հասարակութիւնը։ Ես հաւատում եմ ձեզ բոլորովին։ Պատմաբաններից շատերն են ակնարկութիւն անում ձեր ժամանակի տարօրինակ կուրութեան մասին։ Թէ նրանք անկարող էին բացատրել իրանց ժամանակի երևոյթները, այդ արդէն ապացուցած իրողութիւն է։ Ես շատ շնորհակալ կը լինեմ, բելլըմ։ 100 ՏԱՐՈՒՑ ԵԱՏՈՑ

Եթէ դուք ինձ մի պարզ գաղափար տաք, թէ 1887 թւականի դարձացած մարդիկը որպիսի գաղափար ունեիք հասարակութեան վիճակի և ձգտումների մասին։ Զէ որ դուք կը զգայիք անշուշտ, որ ամենուրեք և ամեն ժամանակ տեղի ունեցող արդինաբերական և սոցիալական անկարգութիւնները, բոլոր գասակարգերի մէջ տիրող անբաւականութիւնը, մարդկութեան ընդհանուր խեղճութիւնն ու անհաւասարութիւնը կանխադուշակ նշաններ էին խոշոր փոփոխութեան։

—Ի հարկէ, մենք այդ բոլորն իմանում էինք, մենք զգում էինք, որ հասարակութեան նաւը կորցրել է իր խարիսխը և նրան խորտակւելու վասանդ է սպառնում, բայց թէ այդ կը պատահի անպատճառ, թէ ոչ, այդ մասին ոչ ոք չէր կարող իմանալ, չնայած որ ամենքն էլ վախենում էինք ստորջրեայ ապառաժներից։

—Այդու ամենայնիւ, պատասխանեց բժիշկը, — հոսանքը շատ որոշ էր և բաւական էր միայն մի քիչ աւելի ուշադրութեամբ գիտել, որ տեսնէիք, թէ նաւը դէպի ապառաժները չի դիմում, այլ դէպի աւելի ապահով խոր ջրերը։

—Կարող եմ ասել, պատասխանեցի ես, — հէնց այն ժամանակ, երբ ես ընկղուցի մազնիսական խոր քնի մէջ, ապագան այնալիսի մուայլ կերպով էր ներկայանում մեզ, որ ես չէի զարմանալ, եթէ այսօր ձեր տան վերելից մի փառակոր քաղաքի տեղ, քարերի ու մամուապատ աւերակների մի կոյոյ ցոյց տայիք։ Մեզնում մի տուած կար այն ժամանակ, որ ասում էր «Աւելի լաւ է յետ նայել, քան թէ տուած մտիկ տալ»։ Այս առածի նշանակութիւնը ես հիմա աւելի լաւ եմ հասկանում, քան թէ երբեկցէ։

Բժիշկ Լիտը լսում էր ինձ խոր ուշադրութեամբ և երբ վերջացրի խօսքս, մտախոհ կերպով գլխով արաւ։

—Ճեր ասածները հաստատում են մեր պատմաբան Ստորիստի կարծիքները ձեր ժամանակի հասարակութեան մըտաւոր վիճակի մասին, ասաց բժիշկը։ Ստորիստ ասելը՝ թէ ձեր ժամանակի մարդկանց մտքերը շփոթւած և խանգարւած են եղել, մեզ թւում էր մի չափազանցութիւն, բայց հիմա ձեր վկայելը ցոյց է տալիս, որ նրա ասածի մէջ ոչ մի չափազանցութիւն չկայ։ Բոլորովին բնական է, որ անցողական շրջանը աչքի ընկնի իր յուզմունքներով ու խոռվութիւններով, բայց քանի որ դըանց բոլորի ձգտումները շատ պարզ էին, բնակա-

Նասպէս պէտք էր հասկացող մարդկանց վրա տիրէր ոչ թէ երկիւր, այլ յոյս, որ հետևանքը շատ լաւ էր լինելու և ոչ թէ վաստ:

—Դուք դեռ շասացիք, թէ ինչպէս լուծեցիք հանելուկը, յիշեցրի ես: —Ինձ համար հետաքեցութիւնը ու բարեկեցութիւնը որ վայելում էք դուք, բնչ դէպերի զօրութեամբ կարողացան հետևանքը լինել իմ ժամանակ գոյութիւն ունեցող շարժումների:

Այստեղ տանտէրս ընդհատեց ինձ սիդար առաջարկելով: Երբ սիդարներս վառեցինք, նա շարունակեց:

—Քանի որ ձեր քունը չի տանում, ես կաշխատեմ փոքր ի շատէ գաղափար տալ ձեզ մեր այժմեան արդիւնաբերութեան ձեի մասին, բայց առաջ դուք ինձ պատասխանեցէք. մը շարժմանն էր դուք աւելի մեծ նշանակութիւն տալիս:

—Ի հարկէ գործադուլներին, պատասխանեցի ես:

—Ինչն էր գործադուլներն այդքան սոսկալի դարձնում: Բանտորական մեծ ընկերութիւնները:

—Իսկ այդ բանտորական միութեան նպատակն ինչն էր:

—Բանտորները կալծում էին, որ իրօք միայն հաւաքական ուժով կարող են իրանց իրաւունքները ձեռք բերել խոշոր ընկերութիւններից:

—Հէնց բանն է այդ է: Նրանց շարժման գաղտնիքը հէնց այդտեղ էլ պէտք էր որոնել, այսինքն կապիտալի կենտրօնացման մէջ: Երբ հազար վաճառականի տեղ լոյս է ընկենում միայն մէկ վաճառական հազարի չափ. կարողութիւն ունեցող, երբ հազար արհեստանոցի տեղ լոյս է ընկենում միայն մէկ գործարան, երբ հազար մարդու կատարած գործը կատարում է միայն մէկ մարդ, բնչ վիճակի մէջ կընկնին այդ հազարները: Զէ որ նրանք ամենքն էլ կը մնան քաղցած: Քանի առ չկար գործարանական արդիւնաբերութիւն, նոյն արդիւնաբերութիւնովն ապրում էին հազարաւոր տներ: Ուրեմն մէկ հատ արդիւնաբերական գործարանը հազարաւոր տների կործանման պատճառ է դառնում: Բոլոր վոքրութիւնները կուզ են զնում խոշորների մէջ: Սա ինքն է կապիտալի կենտրոնացումը: Երբ մարդիկ այլս չէին կարող իրանց կոսէկներով միջիօնների դէմ մրցել, երբ որ չէին կարող այլ ևս իրանց ձեռքի ուժով առուելի մեքենաների դէմ մրցել, բնչ եք էր մեռում նրանց, եթէ ոչ միանալ և հաւաքական ուժով բողոքել

այդ իրաւունքի կերպարանք ստացած անիրաւութեան դէմ։
 «Կապիտալի կենդրոնացումից առաջ, երբ վաճառակա-
 նութիւնն ու արդիւնաբերութիւնը կատարում էին բազմա-
 թիւ մանր ձեռնարկութիւնների և մանր կապիտալների օգնու-
 թիւնով, այդ ժամանակ բանւոր անհատը աւելի մեծ նշանա-
 կութիւն ունէր, և ոչ մի կախումն չունէր իրան գործ տւողից։
 Այն ժամանակ, երբ փոքր դրամագլխով և մի նոր յղացած
 մաքով կարող էր մարդ մի անկախ և ինքնազլուխ գործ ըս-
 կաել, այդ ժամանակ իրանք բանւորներն էլ էին գործի տէ-
 րեր դառնում։ Այդ ժամանակ բանւորական միութիւնների
 պէտք չկար, իսկ ընդհանուր գործադուլների մասին երազել
 անգամ չէին կարող։ Բայց երբ սկսեց խոշոր կապիտալների
 կենդրոնացումը, այն ժամանակ ամեն ինչ սկսեց ուրիշ կեր-
 րարանք ստանալ։ Ամեն մի բանւոր, որ առաջ փոքրիկ գորո-
 ծարանատիրոջ համար մեծ նշանակութիւն ունէր, խոշոր ար-
 դիւնաբերութեան տիրոջ համար կորցրեց իր առաջւայ նշանա-
 կութիւնն էլ ուժն էլ, իսկ առանձին զործի տէր դառնալը
 բոլորովին անհնարին դարձաւ։ Այդ ժամանակից սկսած ինք-
 նապաշտպանութիւնը նրան ստիպեց, որ սերտ կերպով կապւի
 իր վիճակակից ընկերի հետ։

«Պատմութիւնը յիշում է այդ շրջանի մասին, թէ որպիսի
 զօրեղ բողոքներ էին լինում կապիտալի կենդրոնացման դէմ։
 Կարծում էին որ կապիտալի կենդրոնացումը պատրաստում է
 մարդկութեան համար մի այնպիսի սարկական վիճակ, որի մէջ
 երբէք եղած չէր նախնի դարերում։ Սնթագրում էին, որ խո-
 շոր կապիտալների տէրերը պատրաստում էին բաւական բան-
 ւորների համար մի այնպիսի բոնակալական լուծ, որի մէջ գեռ-
 լծւած չէր ոչ մի կենդանի, ուր մնաց թէ մարդը։ Մի դատարկ
 նայւածք ձգելով անցեալի այդ շրջանի վրա, մենք շատ բնա-
 կան ենք գտնում նրանց յուսահատութիւնը։ Պէտք է խոստո-
 վանել, որ իրաւի մարդկութեանը երբէք մի այդպիսի սոսկալի
 վիճակ չի եղել սպառնալիս, որպիսին սպառնում էր հաւաքական-
 կապիտալի դարեշրջանը։

«Չնայելով իր դէմ բարձրացրած աղաղակներին արդիւ-
 նաբերական մենավաճառութիւնը զօրանում էր աւելի և աւել-
 լի։ Միացեալ նահանգներում, ուր արդիւնաբերութեան այդ
 հոսանքը աւելի մեծ ընդարձակութիւն ստացաւ քան թէ եւբո-
 պայում անցեալ դարի վերջին քառորդում, բոլորովին անհնա-

Ճին էր դարձել մի նշանաւոր գործ սկսել արդիւնաբերութեան այս կամ այն ճիւղի մէջ, առանց խոշոր կապիտալի օգնութեան: Նոյն դարի վերջին տասը տարումը բոլոր մանր ձեռնարկութիւնները, որոնք մնացել էին վաղեմի դարերից բոլորովին մոռացւեցան: Դրանք դարձան խոշոր կապիտալների պատառաբոյժները. մանր ու խոշոր միների օրն ընկնելով թագ կացան իրանց բներումն ու անկիւններումը, որ չնկատուն ոչ ոքից և մի կերպ անց կացնեն իրանց սև օրեւը: Բոլոր երկաթուղիները մի քանի խոշոր սինդիկատների ձեռքն էին ընկել: Արդիւնաբերութեան բոլոր նշանաւոր ճիւղերը գտնւում էին սինդիկատների կարգադրութեան տակ: Սինդիկատ էր անւանում խոշոր արդիւնաբերողների ընդհանուր դաշնակցութիւնը: Խնչակս բանւորները իրանց ընդհանուր շահի համար միութիւն էին կազմում իրար մէջ, այսպէս էլ խոշոր կապիտալ ունեցող արդիւնաբերութեան զանազան ճիւղերի ներկայացուցիչները իրար մէջ մի միութիւն էին կազմել, որ և անւանում էր սինդիկատ: Խնչակս բանւորները՝ խօսք-մէկ արած՝ գործադուլ էին անում հակառակ սինդիկատների, նըրանք էլ դարձեալ խօսք-մէկ անելով գործադուլ էին անում հակառակ բանւորների: Խնչ ասել կուզի, որ սինդիկատները յաղթում էին միշտ, քանի որ դրանք իրանց գործադուլով իրանք քաղցած չէին մնում, մինչդեռ բանւորները քաղցած էին մնում թէ իրանց արած գործադուլի ժամանակ և թէ սինդիկատների: Մի և նոյն սինդիկատի մէջ մտնող խոշոր արդիւնաբերուների մէջ մրցութիւն լինել չէր կարող, խօսք-մէկ արած որոշում էին արդիւնաբերած ապրանքի արժէքը, ոչ ոք նշանակած գնից պակասով չէր տալ: Բայց զանազան սինդիկատներ մրցում էին իրար դէմ և այսպիսի դէպքերում աւելի զօրեղները յաղթող էին հանդիսանում, կուկ տալով իրանցից թոյլ սինդիկատներին: Եթէ, օրինակ առաջւայ քսան սինդիկատի տեղ ասպարէզը մնում էր միայն հինգ սինդիկատի ձեռքում, ուրեմն և այն կապիտալը, որ առաջ հաւաքւած էր լինում քսան տեղ, այժմ հաւաքւում էր միայն հինգ տեղ, որ ասել է՝ կապիտալի կենդրոնացումը աւելի էր սաստկանում:

«Քաղաքի ընդարձակ շուկան գաւառում ունեցած իր առետրական բաժանմունքներով ճնշում էր գաւառացի հակառակորդներին, մանր մրցակիցներին և բոլորի տեղ բաց էր անում մէկ հատ խոշոր վաճառատուն ամբողջ թաղի համար,

ուր նախկին խանութպանները հասարակ գործակատարի կամ բանալորի պաշտօն էին կատարում: Փոքրիկ դրամատէրերը չկարողանալով իրանց սեփական ձեռնարկութիւնն ունենալ, ծառայութեան էին մտնում խոշոր ընկերութիւնների մէջ, միենոյն ժամանակ իրանց փոքրիկ գումարովն էլ գնելով նրանց արժէտումսերը կրկնակի կախում էին ստանում նրանցից:

«Եթէ՝ ջնայած ժողովրդի յուսահատ բողոքին վաճառակունութիւնը կենդրոնանում էր մի քանի ուժեղների ձեռքում, այդ փաստն ինքն ըստ ինքեան ցոյց էր տալիս, որ դրանում մի այնպիսի տնտեսական պատճառ կայ, որի առաջն առնել չէր կարելի: Մանր դրամատէրերը իրանց մանր մունր վաճառական ձեռնարկութիւններով տեղի տվին խոշոր դրամատէրերին այն պատճառով միայն, որ նրանք պատկանում էին անցած գարերի արդինարերութեան ձեին և համապատասխան չէր շոդիի, ելեքտրականութեան և վիթխարի ձեռնարկութիւնների ժամանակներին: Վերակենդանացնել իրերի վաղեմի վիճակը՝ եթէ մինչև անդամ այդ հնարաւոր լինէր, — այդ միենոյն կը լինէր, եթէ մի կողմ ձգէին երկաթուղին և ճանապարհորդէին ուղղերով կամ սայլերով: Գնայած խոշոր կապիտալի սաստիկ և անտանելի ճնշմանը, նոյն իսկ նրա զոհերը համ անիծում էին նրան, համ խոստովանում որ այդ եղանակով աւելի էր զարգանում ազգային արդինարերութիւնը և մեծ էլ խնայողութիւն էր լինում: Ստիպւած էին խոստովանել, թէ ինչ օրից որ սկսւեց արդինարերութեան նոր ձևը հնի տեղը բռնել, երկրի հարստութիւնը այնպիսի խոշոր ծաւալ ստացաւ, որի մասին առաջ երազել անդամ չէին կարող է ի հարկէ հարստութեան այդ վիթխարի մեծութիւնը նպաստում էր միայն հարստաների աւելի հարստանալուն, աւելի էլ մածացնելով ունեսորի և չունեսորի միջն եղած վիճը, բայց այսուամենայնիւ իրողութիւնը մնում էր այն, որ կապիտալը՝ լինելով հարստութեան միջոց, որքան շատ էր կենդրոնանում, այնքան էլ շատ էր խոշորանում: Հին կարգերի վերականգնելովը, — այն ժամանակի, երբ հարստութիւնը բաժանւած էր ամենի մէջ համարեա թէ հաւասարաշափ, — եթէ դա կարելի էլ լինէր, այդ հետևանքը կունենար, որ մարդիկ աւելի հաւասար հասարական դիրք և աւելի անհատական ազատութիւն կունենային, բայց կունենար նաև այն հետևանքը, որ ամէնքն էլ հաւասարապէս աղքատ կը լինէին որովհետեւ կանգ կառնէր նիւ-

թական առաջադիմութիւնը՝

«Բայց միթէ հնար չկար ազատւելու այդ կենդրոնացած հզօր կապիտալից, առանց ենթարկւելու հարուստների իշխանութեանը, ինչպէս ենթարկւած էին կարթագինացիք. Հէնց որ սկսեցին մարդիկ այս հարցը տալ իրանց, իսկոյն գտան պատրաստի պատասխանը։ Այն շարժումը, որի նպատակն էր բոլոր գործերը կենդրոնացնել աւելի խոշոր դրամատէրերի գործունէութեան մէջ, և ամեն բանի մենավաճառը դառնալ, և որի դէմ կուտում էին զուր տեղը, ամենքն էլ ընդունեցին, որ դա մի շատ բնական բան է, հարկաւոր է միայն թոյլ տալ, որ նա իր զարգացման վերին աստիճանին հասնի, որ կարողանայ հասցնել մարդկութեանը նրա Ուկեղարին։»

«Ներկայ դարի սկզբում նորագոյն ուղղութեան շարժումը իր գործն աւարտեց բոլոր կապիտալի կենտրոնացումով։ Արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւննը, որ առաջ գտնուում էին անպատճանանատու ընկերութիւնների և սինդիկատների ձեռքում իրանց կամքի համաձայն և իրանց օգտի համար, վերջապէս բոլորը յանձնեցին մէկ հատ նոր սինդիկատի, որի ներկայացուցիչը եղաւ ամբողջ ազգը իր բոլոր անդամներով։ Մէկ խօսքով Միացեալ նահանգների ամբողջ ազգաբնակութիւնը իր ձեռքն առաւ իր սեփական արդիւնաբերութեան և վաճառականութեան գործերը ճիշտ այնպէս, ինչպէս հարիւր տարի առաջ իր ձեռքն առաւ իր երկրի, քաղաքական կառավարութիւնը։ Եւ վերջապէս մարդիկ նկատեցին — ոչ մի երևոյթ համաշխարհային պատմութեան մէջ այսպէս ուշ չէ նկատւել, — այն աշկարա իրողութիւնը, թէ հէնց արդիւնաբերութեան ու վաճառականութեան կառավարելն է եղել ժողովրդի անկողոպտելի իրաւունքը, քանի որ երկրի արդիւնաբերութիւնիցն է կախւած նրանց ապրուստի միջոցները, և թէ ուղակի անխելքութիւն է եղել դրանց յանձնելը մասնաւոր անձերի, որոնք գործում են իրանց սեփական շահասիրութեան համար։»

— Ի հարկէ այդպիսի մի մեծ փոփոխութիւն, ինչպիսին դուք եք նկարագրում, չէր կարող կատարել առանց արիւնակողութեան և խիստ ցնցումների, հարցը ես։

— Ընդհակառակը, պատճանանց բժիշկը, — բոլորովին ոչ մի բռնութիւն գործ չդրւեց։ Այդ փոփոխութիւնը վաղուց ի վեր նախատեսնուում էր։ Հասարակաց կարծիքը բոլորովին հասունացել էր այդ մասին։ Ոչ մի հը-

Նար չկար դիմադրելու ոչ ուժով և ոչ համոզումով; միւս կողմից հասարակութիւնը այլ ևս վատ աչքով չէր նայում սինդիկատների վրա, հենց որ հասկացաւ, թէ նրանք, իբրև օղակներ, անհրաժեշտ էին, որ արդիւնաբերական զարգացումը մի շրջանից անցնի միւսը: Խոչոր մենավաճառների ամենասուակալի թշնամիներն անդամ խոստովանեցին, թէ որքան մեծ ու անհրաժեշտ ծառայութիւններ էին մատուցել նրանք, կրթելով ժողովրդին և սովորեցնելով, որ կարողանայ իր սեփական գործերն իր հսկողութեան տակ առնել: Յիսուն տարի առաջ այս բանի գլուխ բերելը մի շատ յանդուզն փորձ կը համարւէր: Բայց մի շարք օրինակներով մեծ ընկերութիւնները ժողովրդին շատ բան սովորեցրին: Նրանք դարձան օրինակ, թէ ուրեմն երկրի բոլոր հարստութիւնը կարելի է եղել մի հաւաքական ուժի ձեռք տակ հաւաքել: Բայց ով աւելի իրաւունք ունէր դառնալ մի այդպիսի հաւաքական ուժ, եթէ ոչ ամբողջ ազգը, որ կարող է երկրի բոլոր հարստութիւնը դարձնել ընդհանուր սեփականութիւն: Երկար տարիների ընթացքում ժողովուրդը տեսնում էր, թէ ինչպէս ս ինդիկատները կառավարութեան եկամուտներից աւելի շատ եկամուտներ էին ստանում և թէ միինաւոր մարդոց աշխատանքը այնպէս յաջողակ և խնայողութիւնով էին կատարում, որ անհնարին էր փոքր ձեռնարկութիւնների մէջ: Մի բացարձակ ճշմարտութիւն էր դառեւ թէ որչափ գործը մեծ լինի, այնքան պարզ կը լինին նրա կառավարելու հիմնական սկզբունքները: Ինչպէս մեքենան աւելի անսխալ է գործում քան մարդու ձեռքը, այսպէս էլ խոչոր արդիւնաբերութեան եղանակը անսխալ արդինք է տալիս, որովհետեւ կառավարելու այդ եղանակը խոշոր արդիւնաբերութեան մէջ նոյն դերն է կատարում, ինչ որ փոքր ձեռնարկութիւնների մէջ գործատիրոջ հսկող աչքը: Եւ այսպէս ահա, երբ առաջարկութիւն եղաւ, որ ազգը ստանձնի իր գործերի կառավարութիւնը այդ բանը ամենավախսկոտներին անդամ մի անիրազործելի բան չթւաց, չնորհիւ այն նախապատրաստութեան, որ ժողովուրդն ստացել էր խոշոր ընկերութիւնների օրինակներից, Իհարկէ դա մի այնպիսի քայլ էր, որ բոլոր երբ և է եղած քայլերից ամենից նշանաւորն էր: Ինչ ասել կուզի, որ երբ ազգն ինքը դարձաւ տէր և կառավարիչ իր արդիւնաբերութեան, բնականապէս պիտի վերանային այն բոլոր խոչնդուտները, որոնց դէմ կուռում էին մասնաւոր մենավաճառները:

VI

Բժիշկը լուեց։ Ես էլ լուեցի մի քանի ըովէ և աշխատեցի մի որոշ գաղափար կազմել այն փոփոխութիւնների մասին, որոնց պատմութիւնն արաւ բժիշկը։

—Կառավարութեան այլշափ լայն իշխանութիւն տալը և նրա գործունէութեան շրջանն այդ աստիճան լայնացնելը ինձ վտանգաւոր է թուում, ասացի ես վերջապէս։

—Ինչումն էք տեսնում իշխանութեան լայնանալը, հարցրեց բժիշկը։

—Խմ ժամանակի, շարունակեցի ես, կառավարութեան գործն էր պահպանել և պաշտպանել ժողովրդին արտաքին և ներքին թշնամիներից, ուրեմն նրան տւած էր միայն զինւուրական և պոլիցիական իշխանութիւնն։

—Ասացէք, խնդրեմ, որպնք են աւելի թշնամի հասարակութիւնան, արդեօք՝ Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան, թէ սովը, ցուրտը և աղքատութիւնը։ Զեր ժամանակ կառավարութիւնները սովորութիւն էին չին չինել իրանց համար, հէնց որ մի չնչին միջազգային տարածայնութիւն էր պատահում, իսկոյն բոլում էին քաղաքացիներին և հարիւր հազարներով ենթարկում կոտորածի ու խեղանդամութեան և նրանց հարստութիւնն էլ քամուն տալիս։ Շատ անգամ այդ անում էին առանց մի որ և է խելացի առիթի կամ օգուտի։ Հիմա մենք պատերազմներ չունինք, մեր կառավարութիւնն իր տրամադրութեան տակ զինւած ուժեր չունի։ Բայց ամեն մի քաղաքացու քաղցից, ցրտից ու մերկութիւնից ազատ պահելու և նրա փիզիքական ու մտաւոր պահանջների մասին իննամբ տանելու համար՝ կառավարիչներին արդիւնաբերութեան գործերը վարելու պաշտօններ է յանձնում մի որոշ ժամանակով։ Ո՞չ, պարոն Վեստ, լաւ մտածելուց յետոյ՝ կը համոզէք, որ ոչ թէ մեր դարում, այլ ձեր դարումն էր, որ կառավարութեան պաշտօններն ընդարձակւած էին։ Ամենալաւ նպատակների համար մարդիկ իրանց ներկայացուցիչներին այն լիազօրութիւնը չէին տալ, ինչ որ տալիս էին իրանց կառավարութիւններին ամենավատ նպատակների համար։

—Թողնելով համեմատութիւնները մի կողմ, ասացի ես, —իմ ժամանակի պետական մարդոց շահասիրութիւնն ու կաշառակերութիւնը բաւական մեծ պատճառ էին, որ նրանց

յանձնէր ազգային արդիւնաբերութեան գործի դեկալարութիւնը։ Մեր կարծիքով, դրանից էլ վատ բան չէինք կարող հնարել ինքներս մեզ համար, եթէ այդպիսի բան անէինք, այսինքն՝ եթէ ազգային հարստութիւնը ձգէինք այդ գիշատիչների ձեռքը։ Նիւթական շահերը, առանց դրան էլ, այդ ժամանակ մի տեսակ խաղալիկ էին զանազան կուսակցութիւնների ձեռքում։

— Անկասոկած դուք առիթ ունէիք չհաւատալու, համաձայնեց բժիշկը, — բայց այժմ այլ ևս այդպիս բան չկայ, այլ փոխած է բոլորն էլ։ Մենք հիմա ոչ կուսակցութիւններ ունինք, ոչ քաղաքագէտներ, իսկ ինչ վերաբերում է անազնութեան ու կաշառակերութեան, դրանք հիմա պատմական նշանակութիւն ունին միայն։

— Ուրեմն նոյն իսկ մարդկային բնութիւնն էլ պէտք է փոխած լինի, ասացի ես։

— Ամեննին ոչ, այլ մարդկային կեանքի պայմաններն են փոխւել և նրանց հետ փոխւել են նաև մարդոց վարմունքների շարժառիթները։ Ձեր հասարակական կազմակերպութիւնն այնպէս էր, որ պաշտօնեաները միշտ առիթ ունէին ի չարը գործ դնելու իրանց իշխանութիւնը յօդուտ մէկի կամ միւսի և կամ հէնց իրանց սեփական գրպանի։ Զարմանալին այն է, թէ դուք ինչպէս էիք վստահանում դրանց և գործ կամ պաշտօն յանձնում Հիմա, ընդհակառակը՝ հասարակութիւնն այնպիսի կազմակերպութիւն ունի, որ պաշտօնեան որքան վատ հակումներ էլ ունենայ, ոչ մէկը նրանցից կարող չէ գործ դնել, որովհետեւ հնարաւորութիւն չկայ, շարժառիթ չկայ։ Բայց այս բոլորը դուք կը հասկանաք միայն այն ժամանակ, երբ աւելի լաւ կը ծանօթանաք մեր հասարակական կազմակերպութեան հետ։

— Բայց դուք չբացատրեցիք ինձ, թէ ինչպէս վերջացրիք բաննորական հարցը, ասացի ես։ — Երբ ամրող ազգը իր ձեռքըն առաւ գործարանների, երկաթուղինների, հանքերի և առահասարակ երկրի բոլոր տնտեսութիւնը, բաննորական հարցը դեռ մնաց յը լուծւած։ Ուրեմն այն սուր և լարւած յարաբերութիւնը, որ բոլոր սինդիկատներն ունէին բաննորների հետ, այժմ ազգն իր ձեռքն առնելով սինդիկատների գործունէութիւնը, բաննորների պատասխանատուն էլ ինքը պիտի հանդիսանար ի՞նչպէս կարողացաւ վերջ տալ նրանց անվերջ տրտունջներին։ — Հէնց որ ազգն իր ձեռքն առաւ սինդիկատների դերը

այնուհետև բոլոր դժւարութիւններն անհետացան, որովհետեւ ամբողջ ազգը դարձաւ և՝ գործատէր և՝ գործաւոր: Աշխատութիւնը, մշակութիւնը, բանւորութիւնը, որ առաջ մի դասակարգի վրա էր ծանրացած, այդ ծանրութիւնն ազգն իր մէջ բաժանեց, հաւասար բաժին տալով բոլոր քաղաքացիններին էլ: Կարճ ասելով ինչպէս որ ազգայնացրեց արդինաբերութիւնը, նոյնպէս ազգայնացրեց և նրա արտադրութիւնը՝ մշակութիւնը:

Հէնց այս ազգայնացնելու խնդիրն էր, որ ձեր ժամանակ մի հանելուկ էր և մեր ժամանակ ստացաւ իր փառաւոր լուծումը:

—Ուրեմն դուք ընդհանուր զինւորութեան պարտադիր սկզբունքը գործադրում էք այժմ արդինաբերութեան վրա:

—Այո՛, պատասխանեց նա: —Այդ բանը տեղի ունեցաւ ինքնաբերաբար, հէնց որ արդինաբերողը դարձաւ ամբողջ ազգը: Ժողովուրդն արդէն հաշտած էր այն մտքի հետ, որ ամեն մի ֆիզիքապէս առողջ քաղաքացի պարտաւոր է զինւորի պաշտօն կատարել իր ազգի և հայրենիքի պաշտպանութեան համար: Այդպէս էլ ահա ամեն մի քտղաքացի պարտաւոր է մասնակցութիւն ունենալ արդինաբերական և մտաւոր աշխատութիւնների մէջ յօգուտ ազգի: Սակայն ժողովուրդը միայն այն ժամանակ խստավանեց աշխատանքի հաւասար բաժանութեան սկզբունքի արդարութիւնը, երբ ինքը դարձաւ արդինաբերութեան միակ տէրը: Այս բանը չէր կարող լինել, բանի որ գործի տէրերը հարիւրաւոր և հազարաւոր մասնաւոր անձեր էին: Այն ժամանակներում այնպէս էր պատահում, որ ահագին թւով աշխատանք սրոնող մարդիկ թափառում էին այս ու այն կողմ ընկած և գործ չէին կարողանում գտնել: իսկ միւս կողմից՝ շատերն էլ, որոնք ցանկանում էին գործից փախչել, շատ հեշտութեամբ էին անում այդ:

—Իսկ հիմա ծառայութիւնն ամենքի համար ստիպողական է անշուշտ, հարցը ես:

—Ստիպմունք բառը շատ կոշտ է հնչում այժմ մեր կանջին, որովհետև մեղանում ով ինչ որ անում է, ստիպմունքից չէ, որ անում է: Այդ բանն այժմ կարելի է հասկանալ միայն հոգեպէս, այլ ոչ ֆիզիքապէս, ներքին և ոչ արտաքին: Աշխատանքն այնքան բնական և խելացի բան է համարւում, որ ոչ ոք չի էլ մտածում ստիպմունքի մասին: Եթէ մէկին մի բան անել տային միայն ստիպելով նա կը համարւէր մի արտաքոյ կարգի անարդ մարդ: Այսու ամենայնիւ եթէ ասէինք

որ ծառայութիւնը «պարտաւորական» է, դրա նշանակութիւնը շատ թոյլ կը լինէր, այն չէր լինիլ, ինչ որ է խսկապէս, որովհետև ծառայութիւնը մեզանում ոչ միայն պարտաւորական է այլ միանգամայն անխուսափելի է: Մեր հասարտկական ամբողջ կազմակերպութիւնը հիմնուած է այդ անխուսափելի պարտաւորականութեան վրա: Եթէ հնար լինէր մէկի համար փախուստ տալ ծառայութիւնից, նա ապրելու հնարաւորութիւնից կը զրկէր: Այդպիսի մարդը պէտք է ինքն իրան դուրս ձգէր աշխարհից, իր յարաբերութիւնը կտրէր մարդկային ցեղից, մէկ խօսքով անձնասպանութիւն դործէր: Բայց այսպիսի երեսոյթ մեր կեանքի մէջ գեռ պատահած չէ:

Ուրեմն ամեն ոք իր ամբողջ կեանքը պէտք է արդիւնաբերական բանակումն անցկացնէ:

— Ամեննեին ոչ, այդ ծառայութիւնն ընդհանրապէս աւելի ուշ է սկսում և շուտ է վերջանում, քան ձեր ժամանակի բանւորական շրջանի միջն թիւը: Ձեր արհեստանոցները լցւած էին երեխաններով և ծերերով, իսկ մենք մանկական հասակը նւիրական ենք համարում և նրան կրթութեան ենք նւիրում, իսկ հասուն տարիքը, երբ մարդու ուժերն սկսում են թռւանալ մենք նւիրում ենք հանգստութեան և աւելի դուրեկան ու սրտահաճոյ պարապմունքների: Արդիւնաբերական ծառայութեան ժամանակը քսանըշորս տարի է, սկսում է ուսման ընթացքն աւարտելուց յետոյ՝ քսանը մէկ տարեկան հասակում և վերջանում է քառասունընինդ տարեկանում: Քառասունը հինգ տարեկանում աշխատանքից ազատուելով՝ քաղաքացին մին. չի յիսունընինդ տարեկանը համարւում է պահեստի բանակի մէջ և կարող է աշխատութեան կանչել բացառիկ դէպքերում, սակայն այդպիսի դէպքեր շատ հազիւ են պատահում կամ ընաւ չեն էլ պատահում:

«Հոկտեմբերի 15-ը մեզանում համարւում է «Բնութեան 0ր»: Բոլոր քսանը մէկ տարիքի հասածները ծառայութեան մէջ են ընդունւում, իսկ ծառայութիւն վերջացրածները՝ պատւաւը հրաժարական են ստանում: Այդ օրը մեզանում տարւայ տօնն է, այդ օրւանից է սկսում մեր տարեթիւը»

VII

Իմ կարծիքով, ասացի, —մի գլխաւոր դժւարութիւն կայ, որ ես չգիտեմ, թէ դուք ինչպէս էք հեշտացնում: Համարենք

թէ արդիւնաբերական զինւորներն արդէն հաւաքած պատրաստ ևն ծառայելու Սրանով էլ հէնց վերջանում է սրանց նմանութիւնը պատերազմական զինւորները բոլորն էլ մի գործ են կատարում, որ շատ էլ բարդ բան չէ, պէտք է ուղիղ քայլեն, պահապան կանգնեն այստեղ ու այստեղ, հրացան գործածելու ձևերը սովորեն: Բայց այսպէս չեն արդիւնաբերական զինւորները: Նրանք պէտք է մինչև երեք հարիւր և աւելի արհեստներ և մասնագիտութիւններ սովորեն: Այստեղ է ահա դժւարութիւնը: Որքան վարչական տաղանդ է հարկաւոր, որ կարողանայ այդքան արհեստները խելացի կերպով բաժանել բանակի զանազան խըմքերի վրա:

—Այս դէպքում վարչութիւնը ոչ մի գործ չունի:

—Ապա ովէ որոշում այդ բանը:

—Ամեն մարդ ինքն է որոշում իր պարապմունքը համաձայն իր ընածին հակումների: Ամեն կերպ աշխատութիւն է գործ դրում, որ ահագին հնար տրփի որոշելու, թէ ինքն ինչ բանի ընդունակութիւն ունի աւելի: Մեր արդիւնաբերական կազմակերպութեան հիմքը կազմող սկզբունքն այնպէս է, որ մարդու ընական—մտաւոր և ֆիզիքական—յափութիւնները պիտի որոշեն, թէ արդեօք ինչ կարող է անել նա, որ թէ աւելի հեշտ լինի իր համար և թէ աւելի օգուտ բերի աղդին: Քանի որ ծառայութիւնը պարտաւորական է, ինչ ձեի տակ էլ լինի, այս պատճառով թոյլ է արում, ամեն մարդ ինքն ընտրի իր անելիքը աշխատանքը: Եւ որովհետև մարդ աւելի սիրով և հեշտութեամբ է աշխատում, երբ ընտրութիւնն ինքն է լինում արած, այս պատճառով դաստիարակներն ու ծնողները հսկում են մանուկների բնական ընդունակութիւնների վրա:

«Մեր ուսումնաբաններում, որտեղ ընդհանուր ուսմունքներ և գիտութիւններ են աւանդում, ձեռագործ աշխատանք չեն սովորեցնում, սակայն պատանիներին արհեստների մասին տեսական հասկացողութիւն արում է: Մեր երիտասարդները միշտ յաճախում են արհեստանոցները, և դպրոցական զրոսանքներ են կատարում արդիւնաբերական զանազան ճիւղերի հետ ծանօթանալու նպատակով: Ընդհանրապէս դեռ ծառայութեան մտնելուց շատ առաջ՝ երիտասարդը, եթէ նա մի յայտնի պարապմունքի հակումն ունի, հէնց այն էլ ընտրում է իր համար, աշխատում է լաւ սովորել աշխատանքի այդ ճիւղը և

անհամբեր սպասում է այն օրին, երբ ինքն էլ կը մտնի միշտ ուրախ ու զւարթ գործաւորների շաբաթ Խոկ եթէ ընդհակառակն՝ երիտասարդը ոչ մի որոշ հակումն չունի և նախօրք իւր համար մի աշխատանք չի ընտրել, այն ժամանակ նրան մի որևէ հեշտ պարապմունք են տալիս, որի համար մի առանձին ընդունակութիւն ունենալ հարկաւոր չէ, բայց և որի համար աշխատող ձեռքերի կարիք կայ:

—Անկարելի է, ասացի, որ մի որ և է պարապմունքի վրա աշխատել ցանկացողների թիւր միշտ համապատասխան լինի նոյն պարապմունքի համար պէտք եղած աշխատաւորների թւին, այլ կամ աւելի լաւ կը լինի և կամ պակաս:

—Աշխատել ցանկացողների թիւր միշտ համապատասխանում է պէտք եղածին, պատասխանեց բժիշկը: Վարչութեան գործն է հսկել, որ համապատասխան լինի: Եթէ նկատում է, որ մի յայտնի աշխատանքով պարապողների թիւր պէտք եղածից աւելի է, այդ նշանակում է, որ աշխատանքի այդ ճիւղը աւելի դուրս գործի դժւարութեան և հեշտութեան համեմատ են որոշում Այն բանորները, որոնք աշխատանքի աւելի հեշտ, և աւելի դուրեկան հանգամանքների մէջ են աշխատում, նրանք աւելի երկար են աշխատում քան թէ նրանք, որոնք դժւար ճիւղերում և վատ հանդամանքներում են աշխատում, ինչպէս օրինակ հանգերում, ուր աշխատութեան ժամերը շատ կարճացրած են: Զկայ ոչ մի թւարանական կանոն, չկայ, որով կարելի լինէր առաջնորդել՝ աշխատանքի զանազան ճիւղերը հաւասարապէս գրաւիչ դարձնելու համար: Վարչութիւնը արդինաբերութեան մէկ ճիւղում աշխատողների բեռը թեթևացնելու, խոկ միւսը ծանրացնելու ժամանակ ի նկատի ունի նոյն խոկ բանորըներին՝ որոնք մեծ թւով են խառնուում մի յայտնի ճիւղի մէջ աշխատելու Դլխաւոր սկզբունքն այն է, որ աշխատանքը չպէտք է մէկի համար ծանր լինի քան թէ միւսի համար, և այդ բանի մէջ դատաւորները հէնց իրանք աշխատաւորները պէտք է լինեն: Այս կանոնը գործադրելու համար ոչ մի չափ ու սահման չկայ: Եթէ մի որ և է աշխատանք այնքան դժւար ժանր է, որ դէպի նրան աշխատաւորներ գրաւելու համար

անհրաժեշտ լինի օրւայ աշխատանքի ժամանակը տասն ըոպէի իջեցնել, այդ էլ կանչի: Խոկ եթէ այդ անելուց յետոյ էլ՝ դարձեալ աշխատելու ցանկացողներ չգտնւին, այն ժամանակ այդ ճիւղն անդորժադրելի կը մնայ: Բայց, ի հարկէ, աշխատանքի ժամեր քչացնելը և դրա հետ ուրիշ արտօնութիւններ աւելացնելը բաւական են, որ աշխատութեան բոլոր ճիւղերի համար էլ բաւականաչափ աշխատաւորներ գտնւին: Բայց եթէ աշխատանքի մի որ և է ճիւղում աշխատելը այնքան դժւար և վտանգաւոր է, որ ոչ մի արտօնութիւնով կարելի չէ աշխատաւորներ գրաւել, այն ժամանակ բաւական է, որ կառավարութիւնը դուրս գցի սովորական պարապմունքների ցուցակից, որան «առանձին վտանգաւոր» աշխատանք յայտաբարելով, դրա հետ կցերով մի յայտարարութիւն, թէ ով որ աշխատանքի այդ ճիւղը կ'ընտրի, նա ամբողջ ազգի կողմից շնորհակալութեան կարժանանայ և այն ժամանակ տես թէ որ չափ ցանկացողներ կը գտնւին: Մեր երիտասարդներն ընդհան բապէս սիրում են, որ նրանց մատով ցոյց տան, և այդ պատմին հասնելու համար առիթը ձեռքից բաց չեն թողնիլ: Աշխատութեան ընտրութիւնը կամաւոր դարձնելով՝ ամեն հնար գործ է դրւում, որ բոլոր աշխատութիւններն էլ գրաւիլ լինին ու ազատ առողջութեան և կեանքի վնասատու պայմաններից: Առողջութիւնն ու կեանքի անվտանգ լինելը արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի մէջ անհրաժեշտ պայմաններն են: Ազգն իր գործաւորներին հազարաւորներով չի կուռում, ինչպէս այդ անում էին ձեր ժամանակի սինդիկատները:

— Խոկ եթէ արդիւնաբերութեան մի որ և է ճիւղի մէջ աշխատել ցանկացողների թիւը պէտք եղածից աւելի լինի, ինչպէս պէտք է վարւել այդ դէպքում, հարցը ես:

— Այդ դէպքում նախապատութիւնը արւում է նրան, ով որ լաւ վկայականներ է ներկայացնում իր նախնական ատոր աշխատանքի և իր ուսումնառութեան տարիների մասին: Բայց եթէ մէկը յամառութեամբ ցանկանում է ցոյց տալ, թէ ինքն ընդունակ է արդիւնաբերութեան այս ինչ ճիւղի մէջ, նրան վերջիվերջոյ չեն մերժում, այլ թոյլ են տալիս, որ նա իր ընդունակութիւնը գործ դնի իր սիրած արհեստի մէջ: Միւս կողմից, երբ աշխատանքի մի կամ միւս ճիւղի մէջ աշխատել ցանկացողների պակասութիւն է զգացնում, վարչութիւնը իրաւունք ունի լրացուցիչ կամաւորներ

հրաւիրել, կամ թէ չէ՝ ուրիշ արդիւնաբերական ճիշերից վերցնել պէտք եղած աշխատաւորներին։ Այդպիսի դէպքերում ըստ միծի մասին հասարակ գործաւորներից են վերցնում պա։ կամը լրացնելու համար։

— Իսկ հասարակ գործաւորները ինչպէս են ընտրուում։ Ի հարկէ, ոչ ոք իր ազատ կամքովը չի ուզենալ հասարակ գործաւոր դառնալ։

— Այդ դասակարգին են պատկանում բոլոր նորակոչները իրանց ծառայութեան առաջին երեք տարւայ ընթացքում։ Նրիասարդը առաջին երեք տարին կառավարիչների կարգադրութեամբ ամեն տեսակ աշխատանքներ կատարելուց յետոյ միայն իրաւունք ունի իր համար մի որ և է մասնագիտութիւն ընտրելու։ Իսկ մինչև երեք տարին լրանալը ոչ ոք չէ կարող խիստ կարգապահութիւնից ազատ լինել։

— Իրեն արդիւնաբերական սխառեմ—այդ եղանակը շատ նպատակայարմար է, նկատեցի ես,—սակայն ես կարծում եմ, որ դա շատ վատ նախապատրաստութիւն է այնպիսիների համար, որոնք օժտւած են հասարակութեանը ծառայել ոչ թէ ձեռքի աշխատանքով այլ ուղեղով։ Անշուշտ, դուք չէք կարող մտաւոր աշխատանքի պահանջ չունենար Ի՞նչպէս էք ընտրում մաքի մշակներին այն մարդկանցից, որոնք պարտաւոր են նախ երկարագործներ կամ արհեստաւորներ լինել։ Իրա համար շատ դժւար և զգուշաւոր ընտրութիւն է հարկաւոր։

— Դուք իրաւ էք, պատասխաննց բժիշկը,—այստեղ շատ նուրբ դասաւորութիւն է հարկաւոր, հէնց դրա համար էլ մենք ամեն մի անհատին ենք թողնում որոշել, թէ ինչ գործով պիտի պարապի ինքը, —մտաւոր թէ ձեռքի աշխատանքով։ Նրեք տարուան հասարակ գործաւորութեան շրջանը վերջացնելուց յետոյ, որ պարտաւորեցուցիչ է ամեն մի քաղաքացու համար, նրան է թողնուում ընտրել թէ ինքն ինչ ճիւղի մէջ է ընդունակ աշխատելու—նկարիչ լինել, գիտնական, թէ չէ երկրագործ կամ արհեստաւոր։ Նթէ մէկն զգում է, որ ինքն ընդունակ է աւելի զիխով աշխատել, քան թէ մկանունքներով, նրան ամեն կերպ միջոց է արւում, փորձել իր ընդունակութիւնը, զարգանալ, և եթէ իրաւի՛ նա ընդունակ է, շարունակել իր կոչման մէջ յառաջանալ, տեխնիքական, բժշկական, նկարչական, երաժշտական, թատրոնական արւեստին և ուրիշ բարձրագոյն ուսումնարանները միշտ անսպայման բաց են բո-

լոր ցանկացողների համար:

— Աւ ի հարկէ այդ ուսումնարանները միշտ հեղեղւած կը լինին երիտասարդներով այն նպատակով միայն, որ ազատ- ւին ուրիշ աշխատանքներից:

— Բժիշկը ծիծաղեց:

— Ոչ ոք չի մտնիլ գիտութիւնների ու արևեստների ու- սումնարանը նրա համար միայն, որ ազատով աշխատանքից, — կարող եմ ձեզ հաւատացներ — Այդ ուսումնարանները այնպի- սիների համար են նշանակւած, որոնք աշքի ընկնող ընդու- նակութիւններով են օժտւած, իսկ այդպիսի ընդունա- կութիւն չունեցողը աւելի հեշտ կը համարի կրկնակի չա- փով մի որևէ արհեստով պարապել, քան թէ ուսումնարանի դասընթացքն անցնել. Ի հարկէ շատերն անկեղծաբար սխալւած են լինում իրանց կոչման վերաբերութեամբ ու համոզուած են լինում, իրանք թէ անկարող են ուսումնարանի պահանջներին բա- ւականութիւն տալ, դուրս են գալիս այնտեղից և սկսում են ար- դիւնարերական գործունէութիւնով պարապել. դրա համար նրանց ոչ չի արհամարհում — հասարակական քաղաքականու- թիւնը պահանջում է որ ամենքին էլ խրախուսեն իրանց ենթա- դրած տաղանդները զարգացնելու, տաղանդներ, որոնց իսկա- կան ուժը կարելի է տեսնել միմիայն գործնականութեան մէջ: Զեր ժամանակներում մասնագիտական և բարձրագոյն ուսում- նարանները շատ յաճախ գիտումներ էին տալիս այնպիսի անընդունակ մարդոց, որոնք վերջը, իրանց մասնագիտութիւ- նը թողնելով, ուրիշ գործով էին պարապում: Մեր ուսումնա- րանները — ազգային հիմնարկութիւններ են՝ և նրանց քննու- թիւններից անցնելը — իսկական ընդունակութիւն ունենալու ամենալաւ ապացոյցն է: «Այս կամ այն մասնագիտա- կան ճիւղի մէջ ուսում ստանալու համար ամեն մէկին միջոց էր տրուռմ մինչև 35 տարեկան հասակը. դրանից ուշ՝ ուսա- նողներ այլ ևս չէին ընդունուած, որովհետև այդ դէպքում նը- րանց շատ կարճ ժամանակի կը մնար ազգային ծառայութիւն մատուցանել իրանց մասնագիտութիւնով: Զեր ժամանակներում երիտասարդներն ստիպուած էին իրանց համար մասնագիտու- թիւն ընտրել մատաղ հասակում և այդ պատճառով նրանք շատ յաճախ սխալում էին իրենց կոչման մէջ: Իսկ հիմա հաս- տատւած իրողութիւն է, որ շատերի մէջ բնական ձիրքերը աւելի ուշ են զարգանում, քան ուրիշներինը, այդ պատճառով էլ թէկ կարելի է 24 տարեկան հասակում մասնագիտութիւն ունենալու 100 տարու ենթու 4

բնտրել, բայց 11 տարի էլ աւելի է տղուռմ: Մէկ մասնագիտութիւնը միւս աւելի ուշ ընտրած, մասնագիտութեան անցնելն էլ մինչև 35 տարեկան հասակն է թոյլատրում:

Հիմա միայն վերջապէս, ես յարմար համարեցի մի հարց ուսուցութել, որ վաղուց պտըտում էր լեզւիս ծայրին,—մի հարց որ բանուրական հարցի որոշման ամենաէական դժւարութիւնն էից սէլին էր կազմում:

— Զարմանում եմ, սկսեցի ես,—որ դուք մինչև հիմա մի խօսք ա՛ ո՞մ : « սուսիք, թէ ինչպէս էք թոշակները բաժանում: Քանի որ աղոյը միակ գործատէրն է հանդիսանում, պէտք է որ կառավարութիւնը վարձի քանակութիւնը նշանակէ և որոշէ թէ ով ով չափ պէտք է ստանայ, բժշկից սկսած մինչև վերջին հող փորողները: Մի բան. միայն կարող եմ ասել, որ այդպիսի մի բան մեր ժամանակներում անիրագործելը կը լինէր. ես չեմ էլ կարողանում հասկանալ, թէ ձեզնում ինչպէս է յաջողուում այդ, միթէ մարդկային բնաւորութիւնը կատարելապէս փոփոխութեան է ենթարկւել: Իմ ժամանակներում ոչ ոք գոհ չէր իւր ստացած վարձատրութիւնից կամ օրավարձից: Մինչև իսկ եթէ մէկն զգում էր, որ իր ստացածը բաւական է, նա էլի միշտ մտածում էր, թէ իր դրացին չափազանց շատ է ստանում, — իսկ այդ բանը նրա համար ամենամեծ վիրաւորանքն էր: Եթէ այդ ընդհանուր անբաւականութիւնը որ արտայայտում էր անհամար գործատէրերի գլխներին հայհոյանք թափելով ու գործադրուկներով, ուղղւած լինէր մի անհատի դէմ, այսինքն կառավարութեան, այն ժամանակ հազիւ թէ նա կառողանար վարձավճարի երկու օր անց կացնել:

— Բժիշկը սրտանց ծիծաղեց:

— Բոլորովին նեշտ է, շատ հաւանական է, որ հէնց առաջին օրւայ վարձերը բաժանելուց յետոյ ընդհանուր գործադրուկ սկսւէր, իսկ կառավարութեան դէմ եղած գործադրուր արդէն յեղափոխութիւն է:

— Ուրեմն ինչպէս էք դուք յեղափոխութիւնից խուսափում օրավարձ բաժանելու օրերին, — հարցըրի ես: — Չը լինի՞ թէ մի որ և է փիլսոփիա այնպիսի, բոլորովին գոհացնող մի հաշվի եղանակ է հնարել, որով կարելի է ամենաճշտ կերպով զանազան աշխատութիւնները համեմատութեան դնել ու որոշել, թէ մտաւոր աշխատանքը, ինչ արծողութիւն ունի և ֆիզիքականը՝ ինչ կամ գուցէ մարդկային բնութիւնը այնպիսի արմատական փո-

· Փոխութեան է ենթարկւել, որ հիմա ամեն մարդ աւելի հոգս
· է տանում իր մերձաւորի օգուտի մասին, քան թէ իր սեփա-
կան շահերի մասին։ Այս երկու ենթադրութիւններից մէկն ու
մէկը անպատճառ կատարւած լինելու է, որ կարելի լինի այդ
երևոյթը բացատրել:

—Ոչ մէկը և ոչ միւսը, պատասխանեց բժիշկը, «ծիծաղելով»:
—Իսկ հիմա, պարոն Վեստ, դուք պէտք է մտաքերէք, որ ինչ-
քան իմ հիւրն էք նոյնքան և իմ բժշկողն էք, թոյլ տւէք ձեզ
բարի գիշեր ցանկալ, արդէն չորրորդ ժամն է։

—Ձեր պատէրը շատ իրաւացի է և ես յոյս ունիմ, որ
կը կարողանամ կատարել:

—Այդ մասին ես ինքս կը հոգամ, պատասխանեց բժիշկը:

—Յիրաւի, նա ինձ մի այնպիսի գեղ տւաւ խմելու, որից
յետոյ, գլուխս բարձին դնելուն պէս բունս տարաւ։

VIII

Երբ գարթնեցի, ես ինձ բոլորովին զւարթ էի զգում և
մի առ ժամանակ այնպէս գուրեկան կիսանինջ վիճակի մէջ
պառկած մնացի։ Նախընթաց երեկոյի բոլոր զգացածս, — 20-դ
գարը, նոր Բօստոնը, իմ տանտէրն ու նրա ընտանիքը — այդ
ըստորն անհետացել էին յիշողութիւնիցս։ Ես ինձ երևակայում
էի իմ տան մէջ, իմ ննջարանումը և այն բոլոր պատկերները,
որ աշքերիս առաջով անցան կիսանինջ վիճակիս մէջ, բոլորն
էլ իմ առաջւան կեանքի անցքերին ու դէքերին էին վերա-
բերում։ Յիշողութեանս մէջ անցնում էին մեռելոց յիշատակի
օրւան տպաւրութիւնները, Յուլիթի և նրա ծնողների հետ
գերեզմանատառուն գնալու։ Ես մտաքերեցի, թէ ինչպէս գեղեցիկ
էր այդ երեկոյին իմ նշանածը, և այդտեղից միաքս բնականա-
բար անցաւ իմ ապագայ ամուսնութեանը. բայց այդ ժամանակ
ես յանկարծ մտաքերեցի ճարտարապետից ստացածս նամակը,
որով նա ինձ բանուրական նոր գործադրույթ մասին էր տեղե-
կացնում, այն գործադուլի, որի պատճառով մեր տան շինու-
թեան գործը յետաձգւում էր։ Այդ միտքն ինձ այն աստիճան զայ-
րացրեց, որ ես վերջնականապէս արթնացայ։ Յիշեցի որ ժամի
11 ին ժամադիր եմ եղել ճարտարապետի հետ խօսելու։ Ես
ուզեցի մահնակալիս ոտքերի կողմում քաշ արած ժամացոյցին
նայել, բայց ժամացոյց չկար։ Այդ ժամանակ միայն ես համոզ-

ւեցի, որ իմ տանը չեմ գտնւում: Տեղից ցատկելով, ես զար-
մանքով սկսեցի ինձ անծանօթ սենեակը դիտել:

Մի քանի վայրկեան անկողնուս վրայ նստեցի և սկսեցի
գէս ու դէն նայել, չկարողանալով հաւատալի, թէ ես—ես եմ:
Զարմանալի է, որ այդ զգացումը այդ աստիճան տանջում էր
ինձ, բայց ինչ արած, մարդկային բնութիւմը այդպէս է ստեղծ-
ւած: Անկարելի է խօսքերով նկարագրել այն բարոյական տան-
ջանքը, որ ես կրեցի այդ մի քանի բոլոշներում, երբ անօդնա-
կան և կոյրի նման խարխափելով որոնում էի ինքս ինձ ան-
հուն դատարկութեան մէջ: Աստւած չանի, որ երկրորդ անդամ
ես այդ բանն զգամ:

—Զգիտեմ, որչափ երկար տնեց այդ դրութիւնս—ինձ
մի ամբողջ Յաւիտենականութիւն թւաց—երբ յանկարծ կայծա-
կի արագդութեամբ ես մտարերեցի ամեն ինչ—թէ ով եմ ես,
որտեղ եմ, ինչպէս եմ այստեղ ընկել և թէ այն բոլոր դէպ-
քերը, որոնք իբր թէ երեկ էին պատահել,— իսկապէս վերա-
բերում էին վաղուց անցած գնացած օրերին:

Անկողնուց վեր ցատկելով, ես կանգնեցի սենեակի մէջ
տեղում ու սկսեցի ամբողջ ուժով քներակներս սեղմել, կար-
ծես թէ վախենում էի, որ զլուխս չը պայթի՝ յետոյ վայր ըն-
կայ կրկին անկողնուս վրայ և զլուխս բարձի մէջ թաղելով,
մի առ ժամանակ անշարժ ու պառկած մնացի: Սկսեց բնա-
կան տագնաալը, որ անխուսափելի էր այդ աստիճան նեարդա-
յին բորբոքումից և բարոյական ցնցումից յետոյ, առաջ էր ե-
կել իմ կրած տանջանքներից: Մի տեսակ բարոյական ճիգ տե-
ղի ունեցաւ այն բանից յետոյ, երբ ես կատարելապէս զգացի
իմ դրութիւնը. ատամներս իրար կցած գոգուած կերպով ան-
կողնակալի սիւներից բռնած, սրտի զողով ես պառկել էի և
մաքառում էի, որ չցնդւեմ: Իմ ուղեղում ամեն ինչ խառնու-
փնթորւել էր—զգացումներ, սովորութիւններ, մտածողութիւն,
բոլորն էլ իրար էին խառնւել ու խճճւել միմեանց հետ: Ոչ
մի այնպիսի հաստատուն կէտ չկար, որ կարողանար դրանց
միջև կապ լիներ Միմիայն կամքն էր մնացել. բայց միթէ մարդ-
կային կամքը կարող է ալեկոծւած ծովին հրամայել «Հան-
գիստ կաց, մի ալեկոծւիր»: Սո չէի համարձակւում մի բան մը-
տածել. հէնց որ փորձում էի մի բան լրջութեամբ խորհել, խ-
կոյն գլուխս պառյատ էր գալիս: Այն միտքը, թէ իմ «եսը» եր-
կուսի է բաժանւել, թէ ես իմ մէջ երկու անձնաւորութիւն եմ

պարունակում, ինձ այնպէս էր գրաւում, որ կարծես թէ դա
բոլոր ինձ հետ պատահածների ամենապարզ բացատրութիւնը
Մինէր:

Աս զգում էի, ինձ մտաւոր հաւասարակշռութիւն կորցնելու
վասնանգ է սպառնում: Եթէ ես պառկած մնամ տեղում—
—կորած եմ Անհրաժեշտ էր մի որևէ է բանով զբաղեց, գէթ
ֆիզիքական մի շարժում կատարել: Ես դարձեալ վեր թռայ
տեղից, շտապով հագնեցի, բաց արի դուռս և ցած իջայ:
Դեռ վաղ առաւօտ էր, լոյսը դեռ բոլորովին չէր բացւած, և
ես տան ցածի յարկումը ոչ ոքի չգտայ: Նախասենեակումը
մի զիխարէլ կար. բաց արի դրսի դուռը որ կողպւած չէր,—
իբրև ապացոյց, որ նոր հօստոնում գողութիւնից չէին վախե-
նում, —և փողոց դուրս եկայ: Մօտ երկու ժամ ես թափառեցի
քաղաքումը: Դժուար է երեակայել, թէ ինչպիսի զարմանալի
և անսպասելի բաների հանդիպեցի ես այդ կարճ ժամանակա-
միջոցում: Նախընթաց օրը տանիքի՝ քարձրութիւնից, ճիշտ է,
քաղաքն ինձ շատ օտարութիւն երևաց, բայց դա ընդհանուր
տեսքն էր միայն: Իսկ թէ որ աստիճան նա փոփոխութեան
էր ենթարկել—ես այդ կարողացայ հասկանալ փողոցներում թա-
փառելիս: Եթէ քաղաքի դիրքը չինէր, որ անփոփոխ էր մնա-
ցել, ես կարող էի մտածել, թէ մի բոլորովին օտար քաղաք
եմ ընկեր. Մարդ մանկութիւնից իր քաղաքը թողած լինելով,
երբ 50 տարուց յետոյ կրկին այնտեղ վերադառնայ, ի հարկէ,
նրան շատ կողմով փոխւած կը դանի: Այդ տեսակ մարդը
զարմանում է, բայց ոչ թէ ապշում է: Նա զգում է, որ շատ
ժամանակներ են անցել և թէ իր մէջ էլ շատ փոփոխութիւն-
ներ են տեղի ունեցելի Բայց նա աղօտ կերպով էլի յիշում է
այն քաղաքը, որին նա ճանաչում էր մանուկ ժամանակ: Իսկ
ես անցած ժամանակի գիտակցութիւնը չունէի: Ինձ թւում էր,
թէ դեռ երեկ էր, որ ես ման էի գալիս այս փողոցներով,
որտեղ հիմա ամեն բան կերպարանափոխութեան էր ենթարկ-
ուել իր բոլոր կողմերով: Հին քաղաքի պատկերը դեռ այնքան
թարմ ու զօրաւոր էր իմ մէջ, որ տեղի չէր տալիս նոր բա-
ղաքի թողած տպաւորութեանը, այլ մրցում էր նրա հետ,
այնպէս որ նախ մէկ և ապա միւսը անիրական թւացին ինձ:
Այն բոլորը, ինչ որ տեսնում էի, ինձ մութն էր երեսում, ինչ-
պէս որ լինում են միենոյն լուսանկարի մէջ մէկը միւսի վրայ
հասած կերպարանքները:

Վերջապէս, ես էլի դուրս եկայ նոյն դռների մօտ, որտեղից որ գնացել էի: Նմ ոտները ինքնաբերաբար ինձ բերին իմ առաջւան տան տեղը, թէն ես դեռ դիտաւորութիւն չունէի այնտեղ վերադառնալ: Եթէ տան դռները փակւած լինէին, ես կը մտաբերէի, որ դիտաւորութիւն չունիմ ներս մտնելու և յետ կը դառնայի, բայց ձեռքս դիտցրածին պէս՝ դուռը բացւեց, անհաստատ քայլերով նախասենեակից անցնելով, ես մտայ սենեակներից մէկը: Ամենամօտիկ աթոռի վրա վայր ընկնելով, ես ձեռքերով ծածկեցի իմ բորբոքւած աշբերը, աշխատելով փարատել իմ միջից միայնակութեան և օտարութեան բզգացմունքը: Մատար խառնափնթորութիւնս այն աստիճան մեծ էր, որ ֆիզիքական յօդնածութիւն էր առաջ բերում իմ մէջ. ես կարողութիւն չունիմ նկարագրելու այդ բօպէներում կրտծս սարսափը, երբ ուղեղս կարծես, կաշում էր և ես սրտի. դողով զգում էի իմ անօդնական վիճակը: Լու յուսահատական մի ճիշ արձակեցի: Զգում էի, որ եթէ մի օգնութիւն չասնի ինձ, ես կը խելագարեմ: Եւ ճիշտ այդ բօպէին օգնութիւնը հասաւ: Ես հագուստի խշխոց լսեցի և գլուխս վեր բարձրացրի: Իմ յանդիման կանգնած էր օրիորդ Յուղիթը, նրա սիրուն դէմքը ամենաանկեղծ ցաւակցութիւն էր արտայայտում:

—Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն Վեստ, հարցը նաև — Ես այստեղ էի, երբ դուք ներս մտաք: Ես տեսայ ձեր վիշտը և ձեր հառաջանքը լսելով, անկարող եղայ այլ ես լրել: Ի՞նչ է պատահել ձեզ հետ: Դուք ուր էիք: Զեմ կարող արդեօք ձեզ մի բանով օգնել:

Ակամայից, սրտի բուռն ցաւակցութեամբ նա ինձ պարզեց իր երկու ձեռքերը. ես բնազդմամբ լսեցի այդ ձեռքերը իմինների մէջ, ինչպէս ջրի մէջ խեղտաւողը բռնում է փրկարար պարանից: Երբ ես նրա ցաւակցութեամբ լի երեսին ու արտասունքից թրջւած աշքերին նայեցի, իմ ուղեղի միջի խառնափնթորութիւնն անց կացաւ իսկոյն: Մարդկային նուրբ ցաւակցութիւնը ինձ համար այն նեցուկը դառաւ, որին ես այնքան կարօտում էի: Նա ինձ վրա հանգստացնող և մեղմացնող ներգործութիւն ունեցաւ, ինչպէս մի կենսատու էլեքսիր:

—Աստուծոյ օրհնութիւնը ձեզ վրա լինի, ասացի ես: — Աստուծած ուղարկեց ձեզ ինձ մօտ այսպիսի մի բոպէում: Կարծեմ ես պիտի խելագարէի, եթէ դուք ժտմանակին վրա չը հասնէիք:

Այս խօսքերի ժամանակ օրիորդի աչքերը լցւեցին արտա-
սունքով:

— Ո՞հ, պարոն Վեստ, բացականչեց նա: — Ո՞շչափ քա-
րասիրտ պիտի թւանք մենք ձեզ: Ինչպէս կարելի էր այսչափ
երկար ժամանակ ձեզ միայնակ թողնել: Բայց հիմա ամեն ինչ
անցաւ, այնպէս չէ: Հիմա լաւ էք զգում ձեզ:

— Եյս, չորհակալ եմ ձեզանից: Իթէ դուք էլի մի քիչ
ինձ հետ կը մնաք, ես բոլորովին կը լաւանամ:

— Աս չեմ էլ մտածում այստեղից հեռանալ, պատասխա-
նեց նա, և այն թեթև ցնցումը, որ անցաւ նրա երեսից, ամեն
ցաւակցական խօսքերից աւելի պերճախօս էր: — Մի կարծէք,
թէ մենք անսկրտ մարդիկ ենք: Եւ համարեա թէ ամբողջ դի-
շերը չկարողացայ քնել — շարունակ մտածում էի, թէ որքան
ծանր պիտի լինի ձեր այսօրւայ արթնանալը, բայց հայրիկս
հաւատացնում էր, որ դուք երկար կը քնէք: Նա ասում էր,
որ ամենից լաւն է սկզբում ձեզ շատ ցաւակցութիւն ցոյց չը
տալ, այլ աշխատել ձեր միտքը ուրիշ բաներով զրաղեցնել և
զգացնել տալ, որ դուք բարեկամների լրջանում էք գտնուում:

— Դուք այդ ինձ ապացուցեցիք, պատասխանեցի ես: —
Սակայն համաձայնեցէք, որ հեշտ բան չէ մի ամբողջ հարիւր-
ամեակի վրայից ցատկելը. երեկ երեկոյեան ես այդ բանն այն-
պէս էլ խիստ չէի զգում, բայց այս առաւօտ շատ տարօրինակ
զգացումներով յուզեցի:

Օրիորդի ձեռքերը բռնած և աչքերս նրանից վկարելով,
ես կարողանում էի նոյն իսկ կատակ անել իմ վիճակի առի-
թով:

— Ոչ ոքի մտքով չէր անցնի, որ դուք այսպէս կանուխ
կ' գնաք միայնակ քաղաքում թափառելու, շարունակեց նա:
— Ասացէք ուր էիք գնացել դուք:

Այդ ժամանակ ես նրան պատմեցի այն բոլորը, ինչ որ
ինձ հետ պատահել էր զարթնելուս վայրկեանից սկսած մինչև
այն բռպէն, երբ ես նրան տեսայ: Նա ինձ լսում էր ցաւակ-
ցութեամբ:

— Աս կարող եմ ինձ երեակայել ձեր զգացածը, նկատեց
նա, — դա շատ սոսկալի լինելու է: Եւ ինչպէս եղաւ որ մենք
ձեզ միայնակ թողեցինք այդպիսի մաքառման մէջ. — այդ ան-
ներելի է:

— Հիմա այդ ամենն անցաւ, դուք փարատեցէք ինձանից

այն սոսկալի մաքերը:

—Դուք այլ ևս թոյլ չեք տալ ի հարկէ, որ նրանք վերադառնան, հարցրեց նա՝ անհանգառութեամբ:

—Դրա համար պատասխանառու չեմ, Առ. այժմ դեռ վաղ է այդ մասին վստահ լինել —դեռ. ով դիտէ որքան տարօրինակ բաներ եմ տեսնելու:

—Բայց գոնէ խոստացէք, որ մեզ մօտ կը գաք, պնդում էր նա, —և մենք կաշխատենք թեթևացնել ձեր վիճակը:

—Կը գամ, եթէ դուք թոյլ կը տաք, Նս միմիայն ձեր ցաւակցութեանն եմ կարօտ:

—Ուրեմն, վճռւած է, տաեց նա, արտասունքի միջից ժպտալով:

—Միւս անդամ, փոխանակ գնալու թօստոնում օտար մարդոց մէջ թափառելու. դուք կը գաք ինձ մօտ միասին խօսելու:

Այդ ակնարկութիւնը, թէ մենք այլ ևս օտարներ չենք միմեանց համար, ինձ բոլորովին տարօրինակ չերեսաց, մի քառ նի րոպէի մէջ մեզ այնքան մօտեցրել էին միմեանց իս յուսահատութիւնը և նրա ցաւակցութեան արտասունքը:

—Խսկ ես խոստանում եմ ձեզ, աւելացրեց նա մի գրափչ խորամանկ ժպտալով, որ կամաց կամաց ոգեսորութեան փոխւեց, —խոստանում եմ, որ երբ դուք ինձ մօտ կը գաք, ես ձեզ այնպիսի ոէմք ցոյց կը տամ, իբր թէ ես ձեզ շատ եմ ցաւակցում, և այնքան, որչափ որ դուք կը ցանկանաք, սակայն մի կարծէք, ինդրում եմ, թէ դուք ցաւակցութեան կարօտ էք, կամ թէ ես հաւատում եմ, որ դուք դեռ երկար պիտի տառապէք. Նս գիտեմ, որ այժմեան աշխարհը մի կատարեալ դրախտէ, համեմատելով այն աշխարհի հետ, որ գոյութիւն ունէք ձեր ժամանակներում, և ես հաւատացած եմ, որ դուք շատ շուտով փառք պիտի տաք Աստըծուն, որ ձեր կեանքը մի տարօրինակ դիպւածով ընդհատել էր այն դարում նրա համար միայն, որ շարունակի այս դարում:

IX

Բժիշկն ու իր կինը պակաս չը զարմացան, իմանալով, որ ես ամբողջ առաւտու միայնակ թափառել եմ քաղաքումը և, ինչպէս երկում էր, նրանք զարմացած էին, որ ես այնքան

բարոյական փոթորիկներ կրելուց յետոյ այսպէս հանգիստ ու անվրդով էի զգում ինձ:

—Անշուշտ ձեր զքօսանքը շատ հետաքրքրական լինելու էր, նկատեց տիկին Լիտը, —դուք այնչափ նոր բաներ կը տես-նէլք:

—Համարեա թէ բոլորն էլ նոր են ինձ համար: Բայց ա-մենից շատ ինձ զարմացրեց որ ոչ մի խանութ և ոչ մի դրա-մատուն չտեսայ Վաշինգտոնեան փողոցի վրա: Միթէ դուք վերջացրել էք վաճառականներին ու դրամատէրներին: Գուցէ դուք նրանց բոլորին էլ կախել էք, ինչպէս մի ժամանակ ու-դում էին անել անիշխանականները:

—Ոչ, ոչ, գործը մինչեւ այդ տեղ չի հասել, պատասխա-նեց բժիշկը: —Նրանք այլ ևս պէտք չեն մեզ:

—Ապա ո՞րտեղից էք առնում ձեզ պէտք եղած բաները:

—Հիմա էլ առուտուր չկայ, ապրանքների բաժանումը բոլորովին ուրիշ եղանակով է կատարւում: Խոկ ինչ վերաբե-րում է դրամատներին, մենք հիմա դրամ չունենք որ դրամա-տներ ունենք:

—Օրիորդ, գարձայ ես դէպի Յուդիթը—ձեր հայրը ծի-ծաղում է ինձ վրա: Ես նրան չեմ մեղադրում դրա համար, ո-քովիետև իմ տգիտութիւնը ծաղինը մեծ զւարճութիւն կարող է պատճառել: Բայց իմ դիւրահաւատութիւնն էլ սահման ունի:

—Հայրիկը չի էլ մտածում ձեզ ծաղրել—պատասխանեց աղջիկը հանգստացուցիչ ժպիտովի:

Այստեղ խօսակցութիւնն ուրիշ ընթացք ընդունեց: տի-կին Լիտն սկսեց ինձ հարց ու փորձ անել 19 ըդ դարի կա-նանց տարազների մասին: Նախաճաշիկից յետոյ բժիշկն ինձ հրաւիրեց գնալ Բիլվիդերը (տանիքի դիտարանը) իր սիրած հանգստանալու տեղը, ուր մեր խօսակցութիւնը վերստին ա-ռաջւայ նիւթի վրա դարձաւ:

—Դուք զարմացաք իմ խօսքերի վրա, սկսեց նա, — որ տսացի հիմա դրամի ու վաճառականութեան պահանջ չունինք. բայց բաւական է այդ մասին փոքր ինչ մտածել և դուք կը տեսնէք, որ վաճառականութիւնն ու դրամը ձեր ժամանակ-ներում կարենը էին նրա համար միայն, որ վաճառականական գործն ու արդիւնաբերութիւնն մասնաւոր ձեռքերի մէջ էին գտնւում—ահա թէ ինչու համար նրանք հիմա աւելորդ են:

—Ես չեմ կարողանում միանգտմից ըմբռնել, թէ ինչպէս

է միւսի հետեանքը՝ կազմում, ասեցի ես:

— Շատ պարզ կերպով: Երբ շատ անկախ և ինքնուրոյն մարդիկ զբաղւում էին կեանքի և կօնֆօրտի համար կարեոր աւտարկաների արդիւնաբերութիւնով, այն ժամանակ անհամար փոխանակութիւններ էր հարկաւոր մասնաւոր անձերի մէջ կատարել, որ մարդիկ կարողանային բոլոր իրանց ուղածները ձեռք բերել: Հէնց այդ փոխանակութիւնն էր, որ վաճառականութիւն էր կազմում, իսկ այդ զանազան ապրանքների միմեանց հետ փոխանակւելու միջնորդի դերը կատարում էր դրամը: Բայց երբ ազգն ինքը դարձաւ բոլոր առարկաների միակ արդիւնաբերողը, այդ ժամանակից այլ ևս անհետացաւ մասնաւոր մարդոց միջն փոխանակութիւն կատարելու կարեւորութիւնը: Սյէֆժամանակ ամեն բան կարելի էր միայն մի աղբիւրից ստանալ և ոչինչ չէր կարելի ուրիշ աղբիւրից ստանալ: Վաճառականութիւնը փոխարինւեց ապրանքների ուղղակի բաժանումով հասարակական սփանեստներից, իսկ այդ բանի համար դրամ հարկաւոր չէ:

— Բայց ինչպէս է կատարելում ապրանքների այդ բաժանումը, հետաքրքրելոցի ես:

— Ա. Խնազալարզ եղանակով: Տարւայ սկզբում իւրաքանչիւր քաղաքացուն համար վարկ է բացւում, համաձայն այն բանի թէ ազգային տարեկան արդիւնաբերութիւնից նրան որչափ բաժին կարող է հասնել, և այդ նշանակում է հասարակական տոմարների մէջ ։ Քաղաքացային մի տոմսակ է ստանում որի օգնութեամբ նա կարող է ստանալ ամեն ինչ, ինչ որ իրան հարկաւոր է, հասարակական պահեստներից, որոնցից ամեն մի համայնքում կան: Այդ եղանակը ինչպէս կը տեսնէք, բոլորովին աւելորդ է դարձնում որևէ է առեւտրական գործողութիւն: Կը կամենաք մերժվարկային տոմսակը տեսնել:

— Դուք նկատում էք, շարունակեց նա, — մինչ ես ուշադրութեամբ ինձ տւած ստարաթղթի կտորն էի դիտում, — որ այդ տոմսակը յայտնի քանակութեամբ դօլարների չափով է տրում: Մենք պահել ենք հին անունը, բայց զա իրականապէս չէ համապատասխանում առարկայի էութեանը, այլ սոսկ մի ալդեբրայտական նշան է, մէկ արդիւնաբերութեան արժեքը միւսի համար համեմատելու համար: Այդ պատճառով էլ բոլոր արդիւնաբերութիւնների գներն էլ գոլրարներով ու սէնթերով են նշանակւած, ճիշտ այնպէս, ինչպէս

որ ձեր ժամանակներում էր, ինչ որ ես վերցնում եմ այս տոմսակավ, նրա արժէքը դուքս են գալիս այն ընդհանուր վարկի գումարից, որ այս տոմսակի վրայ նշանակւած է:

— Բայց եթէ դուք ցանկանաք մի բան ձեր դրացիից վերցնել, դուք կարող էք վերցրած առարկայի գինը այս վարկից վճարել, հարցը ես:

— Նախ որ, պատասխանեց բժիշկը, — մեր դրացիները ոչինչ ծախսելու բան չունին, բայց յամենայն դէպս մեր վարկը չի կարելի ուրիշին տալ, որովհետև նա պատկանում է միայն նրան ում անունով որ դրւած է: Եթէ ազդը թոյլ տար այդպիսի մի փոխանակութիւն, այն ժամանակ նա ստիպւած ալիքի լինէր հսկելու, որ փոխանակութեան բոլոր պայմանները արդարացի և օրինաւոր կատարեէին: Դրամը մէջ տեղից վերացնելու շատ պատճառներ կան, բայց բաւական է և այն մէկ պատճառը, որ դրամի տէր լինելը դեռ բաւական չէ, որ ասէի թէ նա օրինական իրաւունք ունի այդ դրամը ունենալու: Փողի համար գողութիւն կամ մարդասպալանութիւն անողի ձեռքում դրամը նոյն գինն ունի, ինչ որ իր հալալ քրտինքով վաստակող մարդու ձեռքում: Մեր ժամանակներում մարդիկ բարեկամաբար իրարու նւերներ տալիս են, բայց գնել և վաճառելը բնորովին չեն համապատասխանում այն փոխադարձ լաւու անշահասէր յարաբերութիւններին, որոնք պէտք է առաջին տեղը բռնեն քաղաքացիների մէջ, առուտուրը նայնպէս չի համապատասխանում և այն սանին, որ հասարակութեան բոլոր անդամների շահերը մինոյնն են, որի վրա էլ հէնց հիմնած է մեր ամբողջ հասարակական կազմակերպութեան ձեւը: Մեր այժմեան հասկացողութիւնով առուտուրը իոկապէս հակասոցիալական բան է: 'Իա սովորեցնում է մարդոց՝ մէկը միւսի հաշմին հարստանալ, և այն հասարակութիւնը, որի անդամները այդպիսի մի շկօլայի մէջ են կրթւած, երբէք կարող չէ բաղաքալլիքութեան ամենացած մակերևոյթից վեր բարձրանալ:

— Բայց ինչպէս կանէք, եթէ դուք աւելի ծախսէք, քան ձեր տոմսակի վրտ նշանակած վարկն է:

— Վարկն այնչափ մնծ է, որ աւելի հաւանականութիւն կայ բոլորը չը ծախսելու, պատասխանեց բժիշկը: — Սակայն եթէ մի անակնկալ պահանջի չնորհիւ ամբողջ վարկը ծախսւի, այն ժամանակ մենք կարող ենք միւս տարւայ հաշմին աւելւած վարկ ստանալ, — թէև այդ բանը չի խրախուսւում մեզանում եւ-

այդ սովորութեանը վերջ գնելու համար վարկից մեծ զեղջ է անւում:

— Իսկ եթէ դուք ձեզ բաժին ընկած ամբողջ մասը չը ծախսէք, ի հարկէ, մնացածը ձեր օգտին է հաւաքւում:

— Այդ էլ մի յայտնի չափով է միայն թոյլատրուտմ, եթէ անակնկալ ծախսեր են նախատեսնուում: Բայց ընդհանրապէս ենթադրում է, որ եթէ քաղաքացին իր ամբողջ վարկը չի ծախսել, կը նշանակէ նա կարիք չէ ունեցել և աւելորդն էլ հասարակութեան օգտին է դուռմ:

— Բայց այդ եղանակով հագիւ թէ կարելի լինի քաղաքացիններին ինայողութիւն սովորեցնել, նկատեցի ես:

— Այդ հարկաւոր էլ չէ, պատասխանեց բժիշկը: — Ազգը հարուստ է և չի էլ ցանկանում, որ իր անդամները կեանքի յարմարութիւնների կարօտութիւն քաշեն: Ձեր ժամանակներում մարդիկ ստիպւած էին ամեն տեսակ հարստութիւն ու փող հաւաքել թէ իրանց և թէ իրանց զաւակների սև օրւան համար: Խնայողութիւնը ժամանակի պահանջի շնորհիւ առաքինութիւն էր համարում: Իսկ հիմա նա, իր նշանակութիւնն ու օգտակարութիւնը կորցրած լինելով, այլ ևս առաքինութիւն չէ: Հիմա ոչ ոք չի մտածում վաղւան մասին ոչ իր և ոչ էլ իր զաւակների համար, որովհետեւ ազգն ամեն մի քաղաքացուն ապահովացնում է՝ օրօրոցից սկսած մինչև գերեզմանը, թէ ապրուսի, թէ կըթութեան և թէ առհասարակ կեանքի բոլոր յարմարութիւնների վերաբերութեամբ:

— Այդ շատ ընդարձակ ապահովութիւն է, բացականչեցի ես: — Միթէ կարելի է վստահ լինել, թէ այստեղ մարդի աշխատանքը ազգին հատուցանում է այն բոլոր ծախսերը, ինչ որ ազգը ծախսում է նրա վրա: Ընդհանուր առմամբ, գուցէ և ազգը կարող կը լինի իր բոլոր անդամներին պահել, բայց անշուշտ նրանցից շատերը իրանց վրա ծախսուածից աւելի քիչ են վաստակում, իսկ շատերն էլ ընդհակառակը աւելի շատ: Այդ բանը մեզ գարենալ բերում է թոշակի խնդրին, որի մասին դուք ինձ դեռ ոչինչ չասացիք: Մենք այս կէտի վրա կանգնեցինք երեկ երեկոյին, եթէ դուք յիշում էք, և ես դարձեալ կրկնում եմ, որ հէնց դրա մէջ է կայանում ամենայն դժւառութիւնը ձեր ազգային արդիւնաբերակ ան ձեի գործադրելու համար: Դուք ինչպէս կարող էք բաւարար և արդար կերպով այնչափ բոլորովին տարբեր ու զանազան, պարապմունքների

և արհեստների համար վարձատրութիւններ որոշելու Մեր ժամանակներում վաճառանոցի սակագինն էր աշխատանքի ու ապրանքների գները որոշողը։ Դործատէրերն աշխատում էին որչափ կարելի է շատ ստանալ։ Ճիշտ է, բարսյական կողմից դա մի շատ լաւ ձեւ չէ, բայց գոնէ այդ կոշտ ու կոպիտ ձենք կարողանում էինք լուծել այնպիսի մի խնդիր, որ ուրիշ պայմանների մէջ օրական տասն անգամ պէտք էր լուծել Մեզ թւում էր, որ դա միակ գործնական միջոցն է։

—Այս, համաձայնեց բժիշկը, —ուրիշ միջոց չկար այնպիսի մի կարգի ժամանակ, երբ ամեն մի անհատի շահերը բոլորին հակառակ էին ու ըլշի շահերին, սակայն շատ ցաւալի կը լինէր, եթէ մարդկութիւնը չը կարողանար երբէք մի աւելի լու միջոց գտնել։ Զեր սիստեմը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն ստանայական սկզբունքի գործադրութիւնը, որ ասում է՝ «կու կարիքի մէջ ես գտնում, իսկ ես օգտում եմ քո այդ գրութիւնից»։ Ամեն մի ծառայութեան վարձատրութիւնը, ոչ թէ աշխատանքի գժւարութիւնից կամ վտանգաւոր լինելուց էր կախւած, —որովհետեւ ամբողջ աշխարհի ամենաղժար, վտանգաւոր ու զգւելի աշխատանքը կատարում էին այն դասակարգերը, որոնք ամենից քիչ էին վարձատրում, —այլ բացառապէս կախւած էր այն մարդոց քմահաճոյքից, որոնք այդ ծառայութեան կարիքն ունէին։

—Այդ այդպէս է, համաձայնեցի ես։ — Բայց վաճառանոցի տակսայի համաձայն գներ որոշելու եղանակը շատ գործնական էր, ես չեմ հասկանում, թէ դուք ինչ կարող էիք հնարել նրա տեղը։ Քանի որ կառավարութիւնը ինքն է միակ գործատէրը, ուրեմն կարող չէ ոչ բանւորական վաճառանոց լինել և ոչ էլ տակսայի բանւորական վարձը կառավարութիւնն իր ուղածի պէս է նշանակում։ Դրանից բարդ ու փափուկ խնդիր անկարելի է երևակայել, և անշուշտ այդ բանն ընդհանուր գժգոնութիւն է յարուցանում։

—Ներեցէք, խնդրեմ, բայց ինձ թւում է, որ դուք չափազանցնում էք այդ գժւարութիւնը, խօպէս կտրեց բժիշկը։ — Երևակայեցէք, որ խելացի մարդերից կազմւած մի խորհրդի յանձնւած է բոլոր կարգի աշխատանքների համար վարձ նշանակել այնպիսի սիստեմի համաձայն, որ մեր սիստեմի նման ամեն մարդ գործ ունենայ և նա իր ազատ կտմքով ընտրի իւր պարապմունքը։ Միթէ դուք չէք նկատում, որ որչափ էլ

սկզբում սխալ է շանակած լինին վարձատրութիւնները, այդ սխալը չուտով կարևի է ուղղել Աւելի գուրեկան պարապ-մունքների համար ցանկացողներ շատ կը լինէին, իսկ անդիւր պարապմունքներով դրադուի ցանկացողները շատ քիչ, մինչև որ սկզբնական սխալը չուղ էր: Այս ասում եմ ձեզ պատաս-խանելու համար բիուն: Թէս ոյդ եղանակը շատ հեշտ գոր-ծադրելի է թւում ինձ, բայց դա չէ մտնում մեր սխտեմի մէջ:

— Ապա դուք ինչպէս եք վարում վարձ նշանակելիս, դարձեալ հարցը ես:

Բժիշկն իսկոյն չը պատասխանեց, մի քանի ըռաք նա մտածութեան մէջ ընկաւ:

— Ի հարկէս, վերջապէս խօսեց նա, — ինձ այնքան ծանօթ է ձեր հին սխտեմը, որ ես կարողանում եմ ձեր հարցի ի-մաստն ըմբռնել: Այժմեան նոր հասարակական կացութիւնը այնչափ տարրել է հնից, որ ես դժւարանում եմ, թէ ինչպէս աւելի պարզ պատասխան տամ ձեզ: Դուք ինձ հարցնում էք, թէ մենք ինչպէս ենք թոշակները որոշում: Կարող եմ միայն ձեզ ասել, որ այժմեան մեր սօցիալական տնտեսութեան մէջ այնպիսի գաղափար չը կայ որ կարողանար համապատասխա-նել այն բանին, ինչ որ դուք թոշակ էիք անւանում:

— Այսինքն դուք դրամ չունիք, որ թոշակ վճարէք, ասա-ցի ես: Բայց չէ որ այն վարկը, որ կառավարութիւնը նշանա-կում է քաղաքացիներին հասարակական պահեստներից ստա-նալու համար, բոլորովին համապատասխան է թոշակի: Ի՞նչ չափով են նշանակում վարկերը արդիւնաբերութեան զանազան ճիշդերում աշխատողների համար: Ի՞նչ հիմունքներով են ղե-կավարում մասնէ — բաժիններ տալու ժամանակ:

— Եւրաքանչիւրի երաւունքները նրա վրա են հիմնւում, որ նա մարդ է, պատասխանեց թժիշկը:

— Այդչափ միայն, բացականչեցի ես չը հաւատալով: — Սիթէ դուք ուզում եք ասել, թէ բոլոր մարդիկ միւնոյն մաս-նէբաժինն ունին:

— Անկասկած:

Այս գրքի ընթերցողները, որոնք երկի երբէք ուրիշ հա-սարակական կազմակերպութեան մասին գաղափար չեն ունե-ցել, կամ գուցէ, և պատմական փաստերից միայն տեղեկու-թիւն ունեն, այն հին ժամանակների մասին, երբ բոլորովին տարրեր կարգեր էին տիրապետում, — հազիւ թէ կարողանան

երկակայիլ, թէ որ աստիճան ինձ զարմացրեց ու ապշեցրեց բժիշկ Լիտի այդ պարզ պատասխանը:

— Ինչպէս տեսնում էք, շարունակեց նա, — ոչ միայն մենք փող չունինք թոշակ վճարելու համար, այլ պարզապէս մեզանում մի այնպիսի բան չկայ, որը կարողանար ձեր թոշակ առաջ գաղափարին համապատասխանել:

Մինչ նրա այդ ասելը ես փոքր ինչ ուշի եկայ և մի քանի քննադատական նկտասղութիւններ կարողացայ անել այդ, ինձ համար չափազանց տարօրինակ, կացութեան մասին:

— Բայց չէ որ ոսմանք կրկու անդամ աւելի կարող են աշխատել, քան ուրիշները, բացականչեցի ես: — Միթէ ընդունակ գործաւորները գոհ կը լինեն այնպիսի մի կանոնով, որ նրանց հաւասար է ճանաչում միջակ գործաւորների հետ:

— Մենք անարդարութեան մասին գանգատւելու ոչ մի առիթ չենք թողնում, պատասխանեց բժիշկը, քանի որ այնպէս ենք անում, որ բոլոր մարդիկ հաւասար չափով աշխատեն:

— Բայց ինչպէս է կարելի այդ, քանի որ երկու հոգի անգամ չեն գտնվի, որ միատեսակ ուժի տէր լինեն:

Դրանից էլ հասարակ բան չկայ: Մենք ամէն մէկից պահանջում ենք, որ նա իր ուժի չափովն աշխատի, այսինքն՝ պահանջում ենք մարդից այնչափ ժրաշանութիւն, որչափ որ նա կարող է ունենալ:

— Ենթադրելով նոյն իսկ, որ բոլորն էլ հաւասար ժրաշանութիւն են գործ դնում, բայց չէ որ ամեն մէկի ժրաշանութեան արդիւնքը բոլորովին տարբեր կը լինի, միւսներից:

— Բոլորովին ճիշտ է, սակայն գործ դրւած աշխատանքի քանակութիւնը ոչ մի կապ չունի այդ խնդրի հետ, դա միմիայն ժրաշանութեանն է վերաբերում: Հասարակութեանը ծառայութիւն մատուցանելը բարոյական խնդրի է, իսկ աշխատանքի քանակութիւնը — նիւթական մի քանակութիւն է: Շատ տարօրինակ տրամաբանութիւն կը լինէր եթէ բարոյական խնդրը նիւթական չափով որոշվէր: Հաւասար ժրաշանութիւն գործ դնողները, բոլորն էլ հաւասար չափով են աշխատում: Մարդուած ճիրքերը, որչափ էլ նրանք փայլուն լինին, նրա պարտաւորութեան չափն են միայն որոշում: Մեծ ընդունակութիւններով օժտւած մարդը, — եթէ աւելի պակաս է գործ կատարում, քան նա կարող էր կատարել, թէև նրա կատարած գործը շատ էլ աւելի լինէր փոքր ընդունակութիւն ունե-

ցողից, որ աշխատում է իր բոլոր եռանդով, աւելի վատ գործուոր է համարում քան վերջինը, և նա մինչեւ իր մահը պարտական է մնում իր մեծաւորներին: Ստեղծողն ամեն մարդու մի դաս է տւել նրա ընդունակութեան համեմատ, մենք էլ պահանջում ենք միայն, որ մարդը իր այդ դասը բարեխորդուամբ տովորի:

—Ի հարկէ, դա շատ գեղեցիկ փիլիսոփայութիւն է, ասեցի ես, այդուամենայնիւ դա շատ էլ հաճելի չի լինի այն մարդի համար, որ ուրիշից երկու անդամ աւելի զործ է կատարում, իսկ նրա հետ հաւասար վարձատրութիւն է ստանում, թէկուզ նրանք երկուսով էլ միննոյն եռանդը գործ դրած լինեն:

—Միթէ ձեզ այդպէս է թւում, զարմացաւ բժիշկը: —Գիտէք, այդ չատ հետաքրքրական երևոյթ է ինձ համար: Մեր հասկացողութեամբ պէտք է պատժել այն մարդին, որ կարող է, ուրիշի եռանդի չափ եռանդ գործ դնելով, նրանից երկու անդամ աւելի զործ կատարել, բայց չի կատարում: Կը նշանակէ, 19 րդ դարում, եթէ ձին այծից երկու անդամ աւելի բեռն էր տանում, դուք երկի նրան դրա համար վարձատրում էիք: Իսկ մենք նրան մի լու կը մարակէինք, եթէ նա չը տանէք բեռը, որովհետեւ նա այծից աւելի ուժեղ լինելով, պարտաւոր է նրանից աւելի էլ ծանր բեռ տանել: Զարմանալի է, թէ ինչպէս են փոխուում բարոյական հասկացողութիւնները:

Այս ասելիս բժիշկը աչքերը այնպէս պշացրեց, որ ես ակամայ ծիծաղեցի:

—Ինձ թւում է, պատասխանեցի ես, որ իսկական պատճառը, —թէ ինչու մենք մարդոց ընդունակութիւնները վարձատրում էինք, իսկ կենդանիների աշխատանքի վրա նայում էինք անտարբեր կերպով —այն էր, որ կենդանիները իրեն ոչ բանական էակներ, բնականաբար իրենց ամբողջ եռանդը գործ են դնում, այն ինչ մարդոց եռանդը աւելացնելու համար՝ անհրաժեշտ էր նրանց վարձատրել իրենց ձերքի և կատարելիք աշխատանքի քանակութեան համեմատ: Միթէ դուք միենոյն կարիքը չէք զգում, կամ միթէ մարդկային ցեղը բարոյապէս փոխւել է բոլորովին այս մի հարիւր տարւան մէջ:

—Չեմ կարծում, որ մարդկային բնաւորութիւնը այդ կողմից փոխւած լինի: Նա դեռ այնպիսի վիճակի մէջ է գտընաւում, որ դեռ մասնաւոր դրդումներ են հարկաւոր լինում,

ինչալէս օրինակ՝ պարգևատրութիւն և առանձնաշնորհումներ,
միջակ մարդի մէջ եռանդ յարուցանելու համար:

— Բայց ինչը կարող է մարդին ստիպել ամենամեծ ջա-
նասիրութիւն գործ դնելու, քանի որ նրա ստացած եկամուտը
միւնոյնն է մնում, ինչքան կուզի ժրաշան լինի: Այդ կարգի
հասարակական կազմակերպութեան մէջ ամենամեծ բարոյակա-
նութեան տէր մարդիկ միայն նւիրուած լինեն ընդհանուրի շա-
հերին, իսկ միջակ մարդը տրամադրուած կը լինի ծուլանալու,
մտածելով, թէ կարիք չկայ առանձին ջանասիրութիւն ցոյց
տալու, քանի որ դրանով ոչ նրա արդիւնքը կարող է աւելա-
նալ, ոչ ծուլութիւնից կը պակսի:

—Միթէ դուք կարծում էք, պատասխանեց իմ խօսակիցը,
որ մարդկային բնութիւնը, բացի աղքատանալու երկւղից ու
ճոխ կեանք վարելու սիրուց, ուրիշ ոչ մի բանի զգայնութիւն
չունի, որ ասում էք, թէ ապահով կեանքը և կեանքի բարիքնե-
րից հաւասարապէս օգտելը կարող են մարդոց մէջ մեռցնել
նրանց եռանդը: Հաւատացէք, որ ձեր ժամանակակիցները չէ-
ին կարող այդպէս մտածել, թէև միշտ աշխատում էին ցոյց
տալ, թէ այդպէս են մտածում: Երբ ինդիրը բարձր տեսակի
ինքնազոհութեան էր վերաբերում, նրանք բոլորովին ուրիշ
շարժառիթների էին ենթարկում: Ոչ թէ դրամական վարձա-
տրութիւն, այլ պատիւ, ուրիշներից չնորհակալութիւն ստանա-
լու յոյս, հայրենասիրութիւն և պարտաճանաշութիւն,—ահա
այս զգացմունքներն էին դնում զօրքի առաջ, երբ պէտք էր
լինում մեռնել հայրենիքի համար: Ոչ մի դար չէ եղել, որ այս
զգացմունքներն ունեցած վլնի և սրանցով չլինի առաջնորդ-
ւած դէպի ամենաազնիւն ու ամենալաւը: Այդ դեռ բաւական
չէ. եթէ դուք վերլուծութեան ենթարկէք մարդոց փողասի-
րութիւնը, կը տեսնէք, որ աղքատութիւնից վախենալը և
ճոխ կեանք վարելու փափազը չէին միայն, որ մարդոց ստի-
պում էին հարստութիւն հաւաքել: Բացի դրանից կային և ա-
ւելի բարձր ձգտումներ, ինչպէս հասարակական դիրքի և աս-
տիճանի հասնել, տաղանդաւոր ու յաջողակ մարդի հռչակ վա-
յելել: Այս պատճառով ահա մենք էլ, թէև վերջացըել ենք մեր
միջից աղքատութիւնը, որից այլ ևս վախեցող չկայ, վերջացըել
ենք նմանապէս փարթամ կեանքը և նրա վրա յոյս ունենալը,
բայց մենք բոլորովին չենք դիտել այն ամենակարևոր շարժա-
ռիթներն, որոնք ձեր ժամանակներում դրամասիրութեան հիմքն

էին կազմում, և որոնք կարող են դրդել մարդոց ամենամեծ ծառայութիւնները մատուցանելու: Բիրդ շարժառիթները, որոնք այլ ես մեզ վրա չեն ազդում, փոխած են տեսլի վսեմ շարժառիթների, որոնք ձեր ժամանակներում բռնորովին անծանօթ էին հասարակ աշխատաւորներին նրանց լարձկանութեան շնորհիւ Հիմա երբ արդիւնաբերութիւնը այլ ես մասնաւոր ու անհատական ծառայութիւն չէ, այլ ազգային, հայրենասիրութիւնը և մարդասիրութիւնը նոյնպէս են ազդում դործաւորի վրա, ինչպէս ձեր ժամանակներում ազդում էին զինուրի վրա: Արդիւնաբերական բանակը —մի կատարեալ զօրք է, ոչ միայն նրա լաւ կազմակերպութեան չնորհիւ, այլ և այն բուռն անձնւիրութեան, որ ոգեսորում է նրա բոլոր անդամներին: Ինչպէս որ դուք Էկք աշխատում ձեր զօրքի ոգին բարձրացնել, նրա մէջ հայրենասիրութիւն ու փառասիրութիւն դարձացնելով, այնպէս էլ մենք ենք անում: Որովհետև մեր ամբողջ արդիւնաբերական սիստեմը հիմնած է այն ակզբունքի վրա, որ ամեն մարդից հաւասուր եռանդ է պահանջւում աշխատանքի մէջ, դրա համար էլ այդ ամենարար միջոցն է, ինչ որ մենք ենք անում: Դուք ինքներդ կը աեւանք, որ այն միջոցները, որոնցով մենք խրախուսում ենք աշխատաւորներին, պէտք է որ մեր սօցիալական կազմակերպութեան ամենաէական մասը կազմին: Մեզանում հասարակական ծառայութեան մէջ ցոյց տւած եռանդը —միակ հաստատ ճանապարհն է հասարակութեան համակրութիւնը վայելելու, դիրք ու պաշտօն ստանալու համար: Մէկի հասարակութեանը մասուցած ծառայութիւնները որոշում են նրա գիրքը այդ հասարակութեան մէջ: Եւ ես կարծում եմ, որ մարդոց մէջ եռանդ յարուցանելու համար մեր ունեցած դրդիչ պայմանների հետ համեմատելով ձեր ժամանակայ այդ կարգի սովորական պայմանները, —աղքատութեան վախսը ու ճոխ կետանքի սէրը —շատ թոյլ, անհաստատ և նոյն իսկ բարբարոսական շարժառիթներ էին:

—Ինձ համար շատ հետաքրքրական է, ասեցի ես, —ձեր հասարակական կարգերի հետ ծանօթանալ:

—Մեր կարգերի սիստեմը իրանց բոլոր մանրամասնութիւններով, ի հարկէ, շատ բարդ է, պատասխանեց բժիշկը, —այդ սիստեմի վրա է հիմնած մեր արդիւնաբերական բանակի ամբողջ կազմակերպութիւնը, բայց մի քանի խօսքով ես կարող եմ ձեւ գաղափար տալ այդ մասին:

Այստեղ մեր խօսակցութիւնը ընդհատւեց սիրուն Յուդիթի քելւեդերում յայտնւելով: Նա զրօսանքի հագուստ էր հագած և եկել էր հօր հետ խօսելու մի յանձնարարութեան մասին, որ պիտի կատարէր ինքը:

—Ի դէսը Յուդիթ, ասեց հայրը, երբ նա ուզում էր գընալ, —ինձ թուում է, որ մեր հիւրը կուզենար քեզ հետ մեր ասլրանքների պահեստները այցելելու — ևս նրան արդէն մի քիչ պատմեցի մեր ապրանքները բաժանելու ձեռի մասին և գուցէ նա կուզենայ այդ բոլորը գործնականութեան մէջ աեսնելու: Իմ աղջիկը, դարձաւ նա դէպի ինձ, — եռանդուն խանութներ յաճախող է և այդ մասին նա ինձնից աւելի շատ բան կարող է ձեզ առվարեցնել:

Այդ առաջարկութիւնը, ի հարկէ ինձ շատ դուր եկաւ: Յուդիթը սիրակիր կերպով պատասխանեց, թէ ինքը շատ ուշախ է օգտեւել եմ ընկերակցութիւնից, և մենք միասին դուրս եկանք տանից:

X

— Ես ձեզ մեր ապրանքների պահեստները ցոյց կըտամ և կը բացատրեմ, թէ ինչպէս ենք մենք բան դնում, ասեց իմ ուշակելիցը, երբ մենք փողոց դուրս եկանք, — միայն թէ դուք էլ ինձ պիտի պատմէք թէ առաջւան ժամանակներում ինչպէս էին ապրանք գնում: Ճիշտն ասած, որչափ էլ այդ խնդրի մասին կարուցել եմ, ես երբէք չեմ կարողացել մի բան հասկանալ: Օրինակի համար, եթէ դուք այնչափ շատ խանութներ ունէք, որոնցից ամէն մէկը զանազան տեսակի ապրանքներ էին պարունակում, ինչպէս կարող էր մի կին իր ուզած ապրանքն ընտրել, առանց բոլոր խանութները ման գալու: Ուրիշ կերպ ախը նա չէր կարող իմանալ թէ ինչ ընտրութիւն անէր:

— Ի հարկէ, այդ միակ միջոցն էր զիսենալու համար, թէ մադապիններում ինչ ապրանքներ կան:

— Հայրիկն ինձ անւանում է մագաղինների անխոնջ թափառող, մինչդեռ ես շատ զուտ պիտի յօգնէի, եթէ ստիպւած լինէի մի այդպիսի ահագին ճանապարհորդութիւն կատարել, ասաց Յուդիթը ծիծաղելով:

— Ճիշտ է, զբաղւած կանայքը միշտ դանդատում էին, որ խանութներ ման գալու համար շատ ժամանակ են կորցնում: իսկ անդորք պարապ կինների համար այդ սիստեմը մի կատարեալ գիւտ էր, — խանութներ ման զալը օգնում

Էր պարտապ՝ ժամանակը մեռ ցնել:

—Բայց ենթադրենք, որ քաղաքում հազար հատ խանութեներ կային — հարիւրաւորները միևնոյն ապրանքն ունեցողներ — բնչպէս կարող էին այդ բարորը միանգամից ման գալ նոյն իսկ ամենապարապ կիներն անգամ:

—Ի հարկէ, նրանք անկարող էին այդ ամել, պատասխանեցի ես: — Նրանք, որոնք երկար ժամանակ առևտուրի փորձառութիւն էին, ունեցել, ժամանակով սովորում էին, թէ որտեղ կարելի է գտնել այսինչ հարկաւոր բանը: Այդ կարգի կանայք շատ մանրակրկիտ կերպով ուսումնասիրել էին, թէ ինչ խառնութում ինչ կարգի ապրանքներ կան, և այդ պատճառով միշտ թէ լաւ ապրանք և թէ օգտակար գներով էին առնում: Բայց բաւական երկար փորձառութիւն էր հարկաւոր այդ հմտութիւնը ձեռք բերելու համար: Իսկ նրանք, որ զբաղւած էին լինում և շատ քիչ էին առուտուր անում, առնում էին ինչ ոք հանդիպում էր, և մեծ մասամբ անյաջող էր դուրս գալիս նըրանց առածքը: Շատ հազիւ էր պատահում, որ առևտուրի մէջ անփորձ մարդիկ, իրանց վճարած դրամի համապատասխան ապրանք ստանային:

—Բայց ինչո՞ւ համար դուք այդ անյաջմար ձեր չէիք փոխում, քանի որ զգում էիք նրա պակասութիւնները:

—Այստեղ էլ միևնոյն բանն էր կրկնում, ինչ որ մեր միւս հասարակական կարգերի մէջ: Մենք բոլորովին պարզ կերպով տեսնում էինք նրանց թերութիւնները, բայց դրանց հեռացնելու հասարը չէինք գտնում:

—Ահա և մեր համանքի պահեստը, ասեց Յուդիթը, երբ մենք հասանք այն շքեղ շինութիւններից մէկի դռանը, որ ես իմ առաւտօնեան զրօսանքի ժամանակ նկատել էի: Նրա արտաքին կողմում ոչ մի այնպիսի բան չկար, որով կարելի լինէր իմանալ թէ մագաղին էր: Նրա մեծ պատուհանների առջևում ոչ մի առյօնք չկար ի ցոյց դրած, ոչ էլ նշանատախտակ կար յաճախորդներ գրաւելու համար. սակայն դրա փոխարէն մուաքի վերեւում մի խումբ հսկայական արձաններ էին կանգնեցրած, որոնց մէջ տեղում Առաւտութեան կանացի կերպարանքն էր տեղաւորւած իրան համապատասխան պարագաներով: Ներս ու դուրս անող բազմութեանը նայելով երկու սեռի մէջ եղած համեմատական թիւը նոյնն էր, ինչ որ 19-րդ դարում: Յուդիթն ինձ բացատրեց, որ քաղաքի ամեն մի հա-

մայնքում մի այսպիսի մեծ պահեստ կայ, այնպէս որ ոչ մի քնակարան պահեստից հինգ ըռպէից աւելի հեռաւորութեան վրա չէ գտնւում: Դա 20-րդ դարի առաջին հասարակական շէնքն էր, որ ես տեսնում էի, և ի հարկէ, նա ինձ վրա մեծ տպաւորութիւն գործեց: Սո մտայ մի ընդարձակ և լոյսով հեղւ հեղւած սրահի մէջ, ուր լոյսը ոչ միայն լուսամուտներից էր թափանցում, այլ և առաստաղի գմբեթից, որի գագաթը ամեւ նաքիլը 100 կանգուն բարձրութիւն կունենար: Գմբէթի տակէ սրահի մէջ տեղադրմ մի փառաւոր շատրւան էր խաղում, իր շուրջը դուրեկան զովութիւն տարածելով: Պատերն ու առաստաղը շատ նուրբ գոյների տամկանկարներով էին ծածկուած, երկի այն մաքով, որ լոյսի զօրութիւնը մեղմացնեն առանց կը լանելու: Շատրւանի շուրջը բազմոցներ ու բազկաթոռներ էին շարւած, որոնց վրա յաճախորդները նստուել էին ու իրարու հետ խօսակցում էին: Ամբողջ սրահի չորս կողմով՝ պատերի վրայի գրւածքները ցոյց էին տալիս, թէ որտեղ ինչ կարգի ապրանքներ են տեղաւորւած, և իւրաքանչիւր բաժնի առջև երկար սեղաններ կային շինւած: Յուղիթը մօտեցաւ այդ սեղաններից մէկին, որտեղ կիսէյաների չափականց հարուստ նմուշներ կային դարսած և սկսեց անտղել:

—Ապա գործակատարը սրտեղ է, հետաքրքրեցի ես, նկատելով որ սեղանի յետնում ոչ ոք չկար:

—Առ այժմ ես գործակատարի պէտք չունիմ, պատասխանեց Յուղիթը, — ես գեռ ապրանքը չեմ ընտրել:

—Իսկ մեզանում գործակատարի գլխաւոր պարտականութիւնն այն էր, որ յաճախորդներին օգնէր ընտրութիւն անեալու, ասեցի ես:

—Ի՞նչպէս: Նրանք թելաղընում էին թէ մարդ ինչի պէտք ունի:

—Այս, շատ անդամ էլ սախալում էին գնել այն, ինչ որ քուրովին հարկաւոր չէր լինում գնողին:

—Բայց միթէ տիկինները այդ բանը յանդգնութիւն չէին համարում, հարցընց Յուղիթը զարմացած: — Գործակատարի բնչ գործն է թէ մենք ինչ կը գնենք կամ ինչ չենք գնիլ:

—Ի՞նչպէս թէ ինչ գործն է, Նրանց նրա համար էին վարձում, որ ամեն կերպ աշխատեն ապրանք սաղացնել, և յոյս ունէին, որ նրանք այդ բանի համար ամեն ջանք գործ կը պնեն, իսկ պէտք եղած ժամանակ, նոյն իսկ ուժով ապրանքը

մուշտարուն կը կապեն:

—Հա, ճիշտ ես բոլորովին մոռացայ: Ձեր ժամանակներում ախր խանութպաններն ու գործակատարները ապրանք ծախելով էին իրանց գոյութիւնը պահպանում: Հասկանալի է, որ հիմա բանը բոլորովին ուրիշ է: Ապրանքները աղդային սեփականութիւնն են կազմում: Նրանք այսուեղ դրւած են միայն պահանջ ունեցողների համար. գործակատարների պարտականութիւնն է յաճախորդներին ծառայութիւն մատուցանել և նրանց հրամանները կատարել. բայց գործակատարները ոչ մի շահ չունին մի արշին կամ մի ֆունտ ապրանք աւելի տալու յաճախորդին:—Երևակայում եմ, որ շատ ծիծաղելի կը լինէր տեսնել, թէ գործակատարներն ինչպէս են ստիպում յաճախորդներին՝ զնել այն՝ ինչ որ նրանք չեն ցանկանում:

—Բայց չէ որ գործակատարը հիմա էլ ձեզ շատ օգտակար կար կարդող է լինել ապրանքների մասին զանազան տեղեկութիւններ հաղորդելով ձեզ, պատասխանեցի ես:

—Ոչ, այդ բանը գործակատարի պարտականութիւնների մէջ չի մտնում: Ահա այս տպագրւած թերթիւնները, որոնց համար կառավարութիւնը պատասխանտու է, բոլոր պէտք եղած տեղեկութիւնները հաղորդում են մեզ:

Այդ ժամանակ միայն ես նկատեցի, որ ամեն մի նմուշի կողքին մի թերթիկ էր կացրած, որոնց վրա կարճառու կերպով ապրանքի մասին ամեն տեսակ տեղեկութիւններ կային տպագրւած՝ թէ ինչ նիւթից, ինչ գործարանում են շնուած և ինչ գին ունին, այնպէս որ դրանից յետոյ ուրիշ ոչ մի հարցում անելու կարիք չկար:

—Կը նշանակէ, բոլորովին կարեսրութիւն չկայ որ գործակատարը այս կամ այն ապրանքը յանձնարարի ձեռ գնելու, հարցը ես:

—Բոլորովին ոչ Պէտք էլ չկայ, որ նա ապրանքների մասին մանրամասն տեղեկութիւններ ունենայ: Բաղաքավարութիւն ու ճշտութիւն իրանց պատւիրւած գործի մէջ՝ ահա այն բոլորը, ինչ որ պահանջում էր գործակատարից:

—Որչափ ստախօսութիւններից է ազատում մարդու այս ձեր սիստեմը, բացականչեցի ես:—Սակայն իմ շատախօսութիւնով, կարծեմ ձեզ յետ եմ ձգում գործից, օրիորդ:

—Բոլորովին ոչ ես արդէն ընտրեցի, ինչ որ ինձ հարկաւոր էր:

Այս ասելով նա սեղմեց զանգակի կոճակը և իսկոյն գործակատարը եկաւ: Սա օրիորդի պատէրները՝ մատիտով գրեց մի տախտակի վրա և նրանից երկու պատճեն վերցնելով, մէկը յանձնեց օրիորդին, իսկ միւսը մի փոքրիկ տուփի մէջ դնելով, գցեց փոխանցելի խողովակի մէջ:

- Տւած պատէրի պատճենը, բացատրեց ինձ Յուղիթը, երբ գործակատարը գրելիք ապրանքի արժէքը հաշւելով դուրս եկաւ վարկային տոմանակի գումարից, — պատէրի պատճենը ապրանք գնողին է յանձնում, այնպէս որ եթէ մի սխալմունք պատահի, շատ հեշտ է ուղղել:

— Դուք շատ շուտ ընտրեցիք ձեր ուղածը, նկատեցի ես: — Դուք ինչ գիտէք, թէ ուրիշ պահեստներում աւելի յարժար բան չէիք կարող դանել: Բայց երեխ, դուք պարտաւոր եք գընել միմիայն ձեր թաղի պահեստում:

— Օ, ոչ: Մենք կարող ենք գնել, որտեղ որ ցանկանանք, թէս ի հարկէ, համարեա թէ միշտ առնում ենք այնտեղ, որ մեր տանից աւելի մօտ է: Ես ոչ մի օգուտ չէի ունենալ, եթէ սուրիշ պահեստներ դնայի: Ամեն տեղ էլ միևնոյն ապրանքներն են. իւրաքանչիւր պահեստում կան այն բոլոր ապրանքների նմուշները, որոնք չինուում են Միացեալ նահանգներում կամ թէ բերւում են ուրիշ երկիններից: Ահա ինչու համար մենք կա: բոլ ենք շատ շուտ ընտրել մեր ուղածը և պէտք էլ չունինք երկու պահեստ գնալու:

— Կը նշանակի, այս միմիայն նմուշների պահեստներ են: Ես չեմ տեսնում, որ գործակատարները ապրանք կտրեն ու թղթերի մէջ փաթաթենեն:

— Բոլոր մեր մագաղինները — նմուշների պահեստներ են, բացի արդիւնաբերութեան մի երկու ճիւղերից: Համարեա թէ բոլոր ապրանքները գտնուում են քաղաքային մեծ կենդրոնական պահեստում, ուր ուղղակի գործարաններից են բերում: Մենք մեր պատէրներն անում հնք նմուշների և ապրանքների մասին տպագրւած տեղեկութիւնների ցուցմունքուի: Պատէրները ուղարկում են կենտրօնական պահեստը և այնտեղից են ստացւում ապրանքներ:

— Ի հարկի, դա ազատում է ձեզ շատ երկար ու բարակ գործողութիւններից, ասացի ես: — Մեր սիստեմով՝ գործարանաները ապրանքը ծախում էր հակերով առևսուր անողներին, հակերով առևսուր անողը ծախում էր մանր ծախս անողներին,

իսկ այս վերջիններն էլ ծախում էին ապլանքը գործածողներին և այդ ամեն դէպօմ էլ հարկաւոր էր լինում սակարկութիւն անել: Իսկ դուք ձեր գործը վերջացնում էք առանց որևէ սակարկութեան և առանց մանրավաճառների, որոնք ահազին առկուներ էին վերցնում ու մի ամբողջ բանակ գործակատարներ էին պահում: Ահա այս տունը՝ միայն մեծ վաճառատան նմուշների պահեստ է և շատ գործակատարների կարիք չունի: Մեր ժամանակներում գործակատարներն ապրանք էին ցոյց տալիս, յորդորում էին զնել այս կամ այն, հչնց իսկոյն չափում, կտրում և փաթթում էին, և առա մարդ էլ բաւական չէին լինի այն գործն անելու համար, ինչ որ այսուեղ մէկ մարդ է կատարում: Զեր արած խնայողութիւնը չափաղանց մեծ է:

—Երկի այդպէս է, պատասխանեց Յուդիթը, —բայց մենք ուրիշ եղանակի մասին գաղափար էլ չունինք, և դէպ դուք անպատճառ պէտք է խնդրէք հօրիցս, որ նա ձեզ մէկ անդամ ապրանքների կենդրօնական պահեստը տանի: Շատ ժամանակ չէ, ինչ որ ես գնացել եմ այնտեղ, տեսնելու արժանի բան է: Սիստեմը ի հարկէ կատարելադործութեան է հասցրած: Ահա այնտեղ, այն վանդակի մէջ, ուղարկող — գործակատարն է գտնուում. բոլոր պատւէրները, որ ստացւում են զանազան պահեստներից, որա մօտ են ուղարկուում փոխանցելի խողովակների միջոցով: Այդ գործակատարի օգնականնները տեսակների են բաժանում ստացւած պատւէրները և ամեն մի տեսակը զատ զատ արկղների մէջ են գնում: Ուղարկող գործակատարի առջնում մի դիմինի չափ փոխանցելի խողովակներ կան, որոնցից ամէն մէկը համապատասխանում է առանձին կարգի ապրանքներին, և իւրաքանչիւր խողովակ միացրւած է իւրեն համապատասխանող ապրանքների պահեստի հետ: Գործակատարը պատւէրներով լի արկղը գցում է մի յայտնի խողովակի մէջ և մի քանի բուպէից նա գնում միւս ուրիշ նմուշների մագազիններից ուղարկած, միևնոյն տեսակի պատւէրների հետ միասին, ընկնում է այդ ապրանքին համապատասխանող բաժանմունքը Այդտեղ պատւէրները կարդացում են, տոմարների մէջ են մտցնում և կայծակի արագութեամբ գործադրուում են: Այ, հէնց այդ գործադրութիւնն է ամենահետաքրքրական գործողութիւնը: Ապրանքների հակերը դրւած են գլանանինների վրա, որոնք մեքենաների միջոցով պայտա են գալիս և հակ

